

G13
K-12

613.6.281

F-12

Բժշկական Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՐԹՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Խ-Բ-1-60

Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Ընկ. | Տիոգր. Տ-վա «ԿՈՒԼՏՈՒՐԱ»
Ֆուլյաննովսկայ, 18.

1909

26 FEB 2013

613
P-12 WR

Բժշկական Ա. ԲՍ.ԲՍ.ՑԵ.Ն.

302
1/2

ՀՀ ՀԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ "ԹՐԱԳՈՒՐԻ
Ա. Ֆ. Ֆ. Ֆանու Ռեժիսոր
Խաչատրյան Բայազետյան

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Տրայ առ
Տիկ
Յանձնագույն
Խոշորագույն


ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

32020 3025

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Հնկ. | Տիպոր. Տ-վա «ԿՈՒԼՏՈՒՐԱ»
Վելյամինովսկայ, 18.

1909



1967

20 JUL 2010

ՄՐԲԱՉՆԱԳՈՅՆ

Կարողիկոսին Ամենայն

Հայոց և Ծայրագոյն

Պատրիարքին

Ս. Էջմիածնի

Տեսո՞ւ Տեսո՞ւ

ՄԱՏԹԵՈՍ Բ-Ի

ԱՄԵՆԵԽՈՇԵՐՀ

ՈՐԴԻԱԿԱՆ

ԱԿՆԱԺՈՒԹԵԱՄԲ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

Յ Ա Ռ Ա Զ Ս Բ Ա Ն

1879թ. սկսած, երբ առաջին անգամ հայերէն լեզով լոյս տեսաւ իմ «Ուսումնարանի առողջապահութեան հարցեր» վերնագրով աշխատութիւնս, նախ «Փորձ» ամսագրում և ապա առանձին գրքերով,—ես մտածում էի միշտ մեր հայ հասարակութեան ուշադրութիւնը գրաւել նաև եկեղեցական առողջարանութեան հարցերով։ Այս միտքս չէր իրագործում զանազան գործնական և պաշտօնական զբաղմունքներիս և մանաւանդ այն հանգամանքի պատճառով, որ քաղաքակիրթ ազգերի ոչ մի լեզով այդ նիւթին վերաբերեալ գրականութիւն չէի գլուխում, որով առաջնորդւէի այդպիսի մի նոր գործ սկսելիս։ Սակայն, քանի որ եկեղեցական առողջարանութեան հարցերը մտքիս դադար չէին տալիս, 1905թւին, երբ ձմռան բնակութիւնս առ ժամանակ տեղափոխեցի Պարիդ և երբ յարգելի ընկերակիցս՝ Վ. Արծրունի դիմեց իմ զործակցութեան իր «Առողջապահիկ թերթին», վճռեցի գէթ նամակների ձևով, «Պարիզեան նամականի» վերնագրով, փոքր առ փոքր հրատարակել եկեղեցական առողջապահութեան հարցերը։ Ես կարծում էի սկզբում, թէ այդ ամենը մի քանի յօդւածով կը վերջանայ, սակայն քանի խորն էի թափանցում ընտրածս նիւթի մէջ, այնքան աւելի և նորանոր հարցեր էին առաջ գալիս։ Այսպէս պատրաստւեցին այժմ առաջարկածս գլուքոյկի 18 գլուխները, որոնց մի մասը միայն «Առողջա-

պահիկ թերթի» մէջ լոյս տեսաւ, իսկ մնացած նիւթը անտիպ կենում էր՝ այս թերթի դադարումը վրայ գալով մեր խառնակ ժամանակի ձախող բերմունքներից:

Մնացած նիւթի (12 գլուխ) նորագոյն մշակումին խթան դառնաւ իմ փափագը տպած գլուխները նորերի հետ ձուկելով՝ ամբողջը միասին ձնելու մեր ազգընտիր նոր Հայրապետին՝ նրա սուրբ Օծման առիթով։ Դորձը վերջացած էր նշանակած ժամանակին, սակայն տպագրութիւնը փոքր ինչ ուշացաւ։

Աշխատութեանս այս համաօտ պատմութիւնը ցոյց է տալիս, որ առաջարկած նիւթի իւրաքանչիւր գլուխը առանձին նամակ էր իր ինքնուրոյն յօդւած։ Սրանով պէտք է մեկնել մի քանի կրկնութիւնները՝ զանազան ժամանակի որոշակի արտայայտութիւնով, նիւթիս անհաւասար մշակումը, ժամանակակից հրատապ հարցերին աւելի տեղ տալը միով բանիւ՝ գրքոյկիս խիստ ուսումնական սիստեմ չունենալը։ Սակայն պէտք է խոստովանել, որ հէնց այդ պատճառով էլ գրքոյկս գիտական ձեռնարկի չոր ու ցամաք ոճից աղատ մնաց, պահպանելով հրապարակախօսական գրդիչ ոճը, զարթեցնելով հարցեր՝ որոնց մասին արժէր որ ոչ միայն մեր, այլ և ապագայ սերունդներն ևս մտածէին։ Այս հիման վրայ նիւթիս ձիշտ վերնագիրը պէտք է լինէր «Եկեղեցական առողջարանութեան հարցեր», և մենք համաօտութեան համար միայն դրինք վերնագիրը «Եկեղեցական առողջարանութիւն», որը իսկապէս ապագայի գործ է, երբ միւս քրիստոնեայ եկեղեցիների առողջարանութիւնն էլ կըմշակւի և այդ ամենի ընդհանուր ամփոփումը պիտի կոչւի այդ անունով։ Բարեբախտաբար այդ ընդարձակ գործը արդէն սկսում է. ես վերջացրած էի գրքոյկս, երբ այս օրերս տեղեկացայ, թէ Միլան քաղաքի սուրբ Անտոնիոսի ընկերութեան նիստում մի ընդարձակ զեկուցում

է կարդացել բժ. Agostino Gemelli «Եկեղեցական առողջարանութեան խնդիրներ» վերնագրով (Il problema igienico della chiesa *): Այս աշխատութեան բնագիրը գըժբախտաբար գեռ չեմ ստացած. ապագային սրա մասին դեռ ասելիք կունենամ։

Իմ գործիս նպաստաւոր եղած են ձեռքիս տակ ունեցած ընդհանուր առողջարանութեան գրւածքներ, ինչպէս Rubner-ի, Flügge-ի, Dujardin Beaumetz-ի ընդարձակ ձեռնարկները։

Մեր հայոց աղքատիկ գիտական գրականութիւնից ցանկալի է, որ մեր ընթերցողը ի նկատի առնէր հետեւալ գրւածքները, որոնց մէջ ցիրուցան կըգտնի հետաքրքրական ակնարկներ նիւթիս այս կամ այն մասին վերաբերեալ։

1. Դօկտ. Ն. ՏԱՂԱԻԱՐԵԱՆԻ «Առողջարանութիւն» վերնագրով մեծաղիր գիրքը, հրատ. ի Պոլիս,

*) Gemelli-ն վանական է և բժիշկ. նա այս տարի զբաղւելով կաթոլիկական եկեղեցիների առողջարանութիւնով, զեկուցման մէջ ըերում է իր հետազօտութիւնները. զրանցով նա պարզում է թէ եկեղեցու օգամաքրութեան և տաքացնելու եղանակների թերութիւնից հրպիսի մրտզական հիւանդութիւնների է ենթարկւում ժողովուրդը. նա մանրամասնօրէն քննել է եկեղեցու պատերի և գետնի փոշին և գոտել է նրա մէջ բազմաթիւ հիւանդաբեր մանրէներ (միլորներ). եկեղեցիների փայտէ յատակի փոշին աւելի վարակիչ մասեր ունէր, քան թէ ցեմենթի և մարմարէ յատակի փոշին։ Այս հիման վրա է նա առաջարկում եկեղեցիների յատակը մաքրել գոնէ շարաթը մի անդամ հականեսուկ լուծածով (սուլէմայի ջրով)։

Հայոց եկեղեցիներում փուած գործերը տարիներով երկու փոխները չեն թափ տալ տալիս, հրպիսի և նըքան միկրօրներ պիտի գտնւին նրանց մէջ, եթէ հետազօտութիւն կատարւի...

Gemelli-ն արդարացի կերպով խորհուրդ է տալիս, որ եկեղեցու պատերին յայտարարութիւն կպցնւի զդուշացնելու համար, որ ամբոխը չըխորհի յատակի վրայ, և դրա համար ամեն եկեղեցում պիտի գրին շատ խորիսամաններ։ (Медицинское обозрение 1909 г. № 9, стр. 852.)

1898թ. Նոյն հեղինակի՝ «Մանրէաբանութիւն» (բաքտերոլօգիա) գրքոյկը. հրատ. ի Պօլիս:

Մանօթ. երկուսն էլ լուրջ և հմուտ աշխատութիւններ են, որ կարող են լիակատար ձեռնարկ լինել վերտառեալ նիւթերի դասաւանդութեան համար մեր միջնակարգ դպրոցների բարձր դասաւանդում, նոյն իսկ ճեմարանի լարաններում։ Ավանու որ հեղինակի ոճը գրաբարին շատ մօտ լինելով և գիտական բառերը հայերէն նրբին թարգմանութեամբ՝ ժողովը դիմեամասնութեան անմատչելի են զարձնում այդ մեծարքան երկերը։ Սակայն ցանկալի է, որ գէթ ամեն կրթւած հայ իր սեղանի վրայ ունենար դօկտ. Տաղաւարեանի «Առողջաբանութիւն» ձեռնարկը, որ տասնապատիկ աւելի օգտաւէտ կըլինէր, քան փըքուն «բժշկաբանները»։

2. ԴՕԿ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒՅԻՆ «Ամուսնութիւն» վերնագրով շատ հետաքրքրաշարժ գրքոյկը. հրատ. Թիֆլիս։

Նոյն հեղինակի առաջնորդող յօդւածները իր խմբագրած «Առողջապահիկում» 1904—06 թ. նոյնպէս և նրա ժողովրդական յայտնի տետրակները և «Բժշկի զրոյցները»—վարակիչ հիւանդութիւնների մասին։

3. ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒԽԵԱՆՑԻ, ԲԺ. Բ. ԱՂԱՍԱՐԵԱՆՑԻ, ԲԺ. Ն. ՏԵՐ-ՄԱՀԱԿԵԱՆՑԻ, ԴՕԿ. ԳՐԻԳ. և ՎԱՂԱՐՇ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ և հանգուցեալ Լ. ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ առողջապահական գրքոյկները և յօդւածներ՝ «Մուրճա ամսագրում, «Առողջապահական թերթում» և «Առողջապահիկում», մանաւանդ տարափոխիկ հիւանդութիւններին վերաբերեալները։

4. ԴՕԿ. Ա. ԲԱԲԱՅԵԱՆԻ գրւածքները. ա) «Կրքեր և նրանց ազդեցութիւնը մարդու առողջութեան վրայ» («Փորձ», 1880 թ.), բ) «Մանկական պարտէզների» (ծաղկոցների) առողջապահութիւն» (1882 թ. «Արձագանքից» արտասպած), դ) «Արդի ուղղութիւն առողջաբանութեան և բժշկականութեան մէջ» (1886 թ.), դ) «Բարակացաւ թոքախտը և նորա տարածման առաջն առ-

նելու միջոցներ» (Հրատ. Կովկ. Կայս. Բժշկական Ընկերութեան, 1899):

5. Զանազան եւրոպական հեղինակութիւններ և ազգային պարբերական հրատարակութիւններ, որ յիշւած են գրքիս ծանօթութիւններում։

6. Օգտւած եմ նաև բերանացի և գրաւոր ցուցումներով գրքիս այս և այն գլխի առիթով հետևեալ անձանց կողմից. ա) լեզւա-պատմաբան պ. կ. Կոստաննեանցի. բ) Պարիզի հայ եկ. աւ. ք. Վուամշ. Քիպարեանի. գ) Բաթումի աւ. ք. Հ. Մեսրոպ Մելեանցի. դ) Թիֆլիսի Սողնի եկ. աւ. ք. Հ. Սահակ Սահակեանցի, որոնց պարտք եմ համարում յայտնել նաև հրապարակով իմ շնորհակալութիւնները։

Ի վերջոյ պէտք է ասեմ, թէ հրատարակելով այս աշխատութիւնը իբր առաջին փորձ, ամենից աւելի ես ինքու եմ զգում սրա թերութիւնները։ Սակայն մեծ յոյս ունիմ, թէ այս գործի շարունակողներ և լըրացողներ պիտի ունենամ ապագային մեր եռանդուն երիտասարդ հայ բժիշկների կողմից, ինչպէս բարերախտաբար ունեցայ ուսումնարանի առողջապահութիւնս հրատարակելուց յետոյ յանձին դօքտ. Վ. Արծրունու, դօքտ. Փաշայեանի (դպրոցական առողջապահութեան հեղինակների)։

Ա. Բ.

Գ Լ Ո Ւ Խ Ա.

Եկեղեցու օլավիկութիւնն ու լրաստրութիւնն

Երբ որ գիտութեան մէջ տեղի ունին՝ զինւորական առողջաբանութիւն (военная гигиена, hygiène de l'armée), գործարանական առողջաբանութիւն (фабричная гигиена, hygiène des fabriques), գպրոցական առողջաբանութիւն (школьная гигиена, hygiène des écoles) և այլն, ինչու չըպիտի լինի և եկեղեցական առողջաբանութիւն *): Այնինչ ոչ մի լեզում այդ վերտառութիւնով մի գիրք կամ գրւածք չըկայ, ոչ մի առողջաբանական, նոյնիսկ ընդարձակ, ձեռնարկում այդ նիւթին վերաբերեալ մի գլուխ չէք գտնիլ: Իսկապէս այդ զարմանալի է, քանի որ հոգեսոր դասը ինքը շատ անգամ իր հաստատութիւններում հասարակաց առողջապահութեան հոգաը քաշած է ժամանակակից առողջաբանական գիտութեան համեմատ:

Հին ժամանակներում քուրմերը, քահանացապետները և մարգարէները բժիշկների դեր և կատարելով շատ անգամ սահմանած են թէ տա-

*) Հիգիենա (hygiène) խօսքի տեղ ես գործ եմ ածում «առողջաբանութիւն», իսկ «առողջապահութիւն» բառը, որ մեզանում զործածւում է նոյն մտքով, լաւ է գործադրենք «պոֆիլաքս»-ի (Profilax-ի) փոխարէն:

ճարների և թէ մարդկային կենցաղի ամենակարևոր շրջանների համար որոշ առողջապահական կանոններ, որոնցից մի քանիսը մտած են յետոյ քրիստոնէական եկեղեցու մէջ իբրև ընդունւած կրօնական սովորութիւններ։ Քրիստոնէութեան սուրբ հայրերը նոյն գերը շարունակելով՝ այս կամ այն առողջապահ կարգեր սահմանած են թէ եկեղեցում և թէ եկեղեցուց դուրս, կամ եղած կրօնական կարգերը փոխած են ժամանակի առողջաբանութեան պահանջների համեմատ։

Ասածս պարզեմ մի քանի օրինակներով։

ա) Ո՞ւմ յայտնի չէ, որ հրէաների և մահմեղականների մէջ մի կրօնական կարգ է մասնուկների թլպատութիւնը։ Արդ՝ ի՞նչ է սա, եթէ ոչ Մովսէս մարդարէի հասարակական առողջապահ կարգադրութիւններից մէկը, որ յետոյ Մուհամեդն էլ ընդունեց իր հաւատացեալների համար։

բ) Ի՞նչ է քրիստոնէական եկեղեցիներում ընդունւած իննկարկութիւնը, որ սուրբերի պատկերներին, հոգեոր մեծաւորներին և առհասարակ ժամաներին պատիւ տալու ձև է ստացել։ Եթէ խորը պարտենք, կըգտնենք, որ այս ծէսի հիմքն էլ զուտ առողջապահական է։ Արդարե, երբ ժողովրդի բազմութիւն հաւաքւում է մի փակ ազօթարանում (ձմեռ ժամանակ) և ժամերով մնում այնտեղ, երբեմն էլ շրջապատած մի հանգուցեալի դիակ, — այդպիսի սրահում ընականաբար օդը լցում է գարշելի հոտերով։ Այդտեղ երկար մնա-

լը գժւար և անտանելի պիտի լինէր, եթէ չըծխւէր այնպիսի նիւթ, որ իր անուշահոտութիւնով գոնէ ծածկէր գարշահոտութիւնը։ Այդպիսի նիւթ հնուց յայտնի էր և գործածական հեթանոսական հանդէսներում իսունկը, որ բուրգառներում այրւելով՝ տարածում է չորս կողմ անուշահոտ բուրմունք։ Այս գեռ բոլորը չէ. անուշաբոյր ծառերի խէժը, ինչպէս է խունկը, մի ուրիշ աւելի օգտաւէտ յատկութիւն էլ ունի, այն է՝ իր բուրմունքով օդը օգօնացնում է, այսինքն՝ օդի թըթւածնի մի մասը վերափոխում է օգօնի, որ եռապատիկ աւելի ազգեցիկ է և որով օդի ապականութիւնը փոքր իշտուէ պակասում է, օդը փոքր իշտուէ մաքրւում է հիւանդաբեր մանրէներից։

«Փոքր ի շատէ» խօսքը կրկնեցի, որովհետեւ մեծ բազմութիւն ունեցող փակ սրահներում օդը այն ժամանակ միայն կատարելապէս կըմաքրւի, երբ նրանք մատակարարւած են օդափոխութեան այժմեան գործիներով՝ հողմարարի (վենտիլատոր)։ Խնկի ծուխը չի կարող հողմարարի տեղը բռնել, քանի որ այդ ծուխը եթէ չափազանց առատացնեն օդի մէջ (առանց օդափոխութեան), փոխանակ օդուտի՝ վասա կըբերի։

Ուրեմն՝ ամեն նորաշէն եկեղեցի պէտք է առաստաղում և պատերում ունենայ օդափոխչ գործիներ, որ առանց ներսի օդը միանգամից ցրտացնելու՝ դուրս քաշեն գարշահոտութիւնը և մաքրուր օդ ներս թողնեն։

գ) Նոյն առողջաբանական հիմքը կարելի է

գտնել եկեղեցիների լուսատրելու եղանակում։
 Ինչու եկեղեցու հայրերը մեղքամում՝ վառելու
 սովորութիւնը մտցրին, փոխարէն ձէթի կամ
 ճարպի կամթեղների, որ նախկին քրիստոնեա-
 ներն էին գործածում։—Որովհետև, կըպատաս-
 խանեմ, ձէթը, ճարպը վառելով՝ չափազանց
 ապականում էին եկեղեցու օդը, վատ հոտեր էին
 արձակում, որ ժամւորների բազմութեանը ան-
 տանելի էր։ Մեղրամոմը, ընդհակառակը, վառ-
 ելով՝ մասսամբ տարածում է օդի մէջ մեղրին
 անցած ծաղիկների անուշահոտութիւնը։ Սակայն
 այժմս, պէտք է խոստովանել, որ եկեղեցական
 մոմավաճառութեան գործը կապալառուների ձեռ-
 քըն ընկնելով՝ այնքան խարդախութիւնների է
 ենթարկւած, որ չափազանցութիւն չի լինիլ եթէ
 ասեմ, թէ այժմս եկեղեցիներում ոչ թէ մեղրա-
 մոմ է գործածում, այլ՝ զանազան, նոյնիսկ
 ֆսասակար, ճարպային նիւթերից խարդախած
 մոմեր։ Այս էլ չըլինի, պէտք է դիտենանք, որ
 մեղրամոմը, ինչպէս ամեն այրւող նիւթ, վառ-
 ելիս կլանում է օդի թթւածինը և փոխարէնը
 տալիս է օդին ածխաթթւուտ անտեսանելի գազը
 (օդակերպը)։ Քիմիապէս այրեցուին հէնց այդ
 գործողութիւնն է։ Բնախօսութիւնից (Փիզիոլո-
 գիից) յայտնի է, որ նոյն քիմիական այրեցու-
 մըն է և շնչառութիւնը։ Մարդս ներշնչելով իր
 թոքերի մէջ օդը՝ առնում է նրանից կենսապի-
 տան թթւածինը և տալիս է օդին անպիտան
 և ֆսասակար ածխաթթւուտը։ Ուրեմն, երբ փակ

եկեղեցում բազմաթիւ ժամւորներ են լինում և
 միենոյն ժամանակ անհամար մոմեր ու կերոններ
 են վառւած, դրանք բոլորը հաւասար կերպով
 կանում են օդի թթւածինը և, ընդհակառակը,
 առատացնում են օդի մէջ ածխաթթւուտ գազը։
 Այս է պատճառը, որ եկեղեցական մեծ տօներին,
 երբ եկեղեցում ասեղ գցելու տեղ չի լինում,
 ներսի օդը այնքան թմրեցնող և խեղդող է
 գառնում։

Այս ամենի հիման վրայ կըկին հաստատ-
 ւում է նախ՝ վերը բերածս կարծիքը, թէ եկե-
 ղեցիները պէտք է ունենան առաստաղում բաց-
 ւածներ կամ պատերում հողմարարներ (վենտի-
 լատօրներ)։ Երկրորդ՝ որ այժմեան առողջաբա-
 նութեան անսակէտով եկեղեցիների լուսաւորու-
 թեան ամենացանկալի եղանակը պիտի համարուի
 էլէքտրական լուսաւորութիւնը։ Ուր որ էլէքտրա-
 կան լուսաւորութիւնը տարածւած է և թանգ չէ
 ձեռք բերելը, մեր եկեղեցու հայրերը ոչ թէ պի-
 տի ընդդիմանան, այլ իրանք ձգտեն այդ մաքուր
 լուսաւորութիւնը մտցնելու եկեղեցիներում, ինչ-
 պէս այդ բանը իրագործւեց Թիֆլիսի ոռուսաց
 զինուրական մայր եկեղեցում երկար խորհրդակ-
 ցութիւններից յետոյ թէ տեղական իշխանու-
 թեան և նոգեռականութեան և թէ օրթօգօքս
 սինօդի կարգադրութեամբ։

Դրա դէմ մի հարց միայն կարող է ծագել,
 այն է՝ մոմավաճառութեան եկամտի կորուստը,
 որ շատ թւալի պիտի լինի առանց այն էլ մեր

Հքաւոր եկեղեցիների համար։ Սակայն այդ կոռուսաթը լրացնելը դիւրին է, քանի որ ամեն եկեղեցում մասնաւոր գանձարան կըդրւի, ուր ամեն ժամանոր իր լուման կըդցի «մեղրամոմի համար», ինչ կերպ էլ լուսաւորելու լինի եկեղեցին։

Q u i c k g r e e n l o v e

Վերը բերինք օրինակներ խունկ ու մռմից բայց քանի՞-քանի՞ ուրիշ եկեղեցական կարգեր կան, որոնք միանդամայն առողջաբանութեան վրայ են հիմնւած:

դ) Մտաբերեցէք խաղողօքնուվթեան հանդէսը: Ի՞նչ մեր մեր եկեղեցու հայրերը պահէք կամ արգելք են զրել խաղող ուտելուն մինչև Աստւածածնի վերափոխման օրը, որ սովորաբար գալիս է օգոստոս ամսի մէջներքին: Դրա հիմքը շատ պարզ է. որպէս զի ժողովուրդը ժամանակից առաջ խակ խաղող ուտելով չըֆնասւի, հարինքային համաձարակի չըհանդիպի: Դրանով կասես թէ՝ միւս խակ մըգերի համար էլ մի տեսակ նախազգուշացում է դրւած:

Ե) Միթէ նոյն առողջապահ հիմունքի վրայ չեն սահմանած եկեղեցու հայրերը պաս և ոտիսի օրերը, շարաժական և մեծ պատր: Ում յայտնի չէ, որ այժմեան առողջաբանութեան գիտութիւնն էլ քարոզում է մարդկանց հանապազօրեայ

մսակերութիւնից զգուշանալ, որ ասել է թէ՝ ուտիս
և պահք կերակուրների, այսինքն՝ մսեղէնի և
բանջարեղէնի փոփոխութիւնով որոշեալ ժամա-
նակներում մարդուս առողջութիւնը աւելի ապա-
հովւած կըլինի. ժողովուրդները այդ կերպով կա-
զատւեն որոշ տեսակ հիւանդութիւններից, մա-
նաւանդ բժիշաւի (պօդագրայի, goutte) զանա-
զան տեսակներից, որոնք այնքան տարածւած են
օրինակ՝ մնակեր և ոգի-(սպիրտ)արբու Սնդ-
լիայում և որոնք համեմատաբար շատ հազւա-
դէալ են հացեղէն և բանջարեղէն առատօրէն գոր-
ծածող (պահք պահող) ժողովուրդների մէջ, եթէ
սրանք արարդ-զինին էլ չափաւոր կամ միայն հան-
դիսաւոր օրերն են գործ գնում: Երանի թէ այժ-
մեան մեր հոգեւորականներն այս մտքով հասկա-
նային պահքի նշանակութիւնը, ժողովրդին քա-
րողէին դրա բուն առողջապահ սկզբունքը և
պասը չըդարձնէին մի ստիպողական անմիտ կրօ-
նական ծիսակատարութիւն, որից ազատւելու
բնական ձգտումով մեր քաղաքների ունեոր դա-
սը օրէցօր աւելի և չափազանց մսակեր է դառ-
նում, քանի որ չի իմանում բանի էութիւնը:

զ) Վեր առնենք դարձեալ մի օրինակ մեր
եկեղեցու ծէսերից։ Յայտնի է թէ քրիստոնէու-
թեան սկիզբներում, երբ պատարագի ժամանակ
երգում էր «Ողջոյն տուք միմեանց ի համբոյր
սըբութեան», իրար մօտ կանգնած բոլոր հաւա-
տացեալները—իշխանաւոր, հարուստ թէ աղքատ—
իրարու ողջունում էին և համբուրուում։ Սա

պատարագի ամենազմայլելի հանդէսը կամ արարողութիւնն էր և գործով կատարւում էր եղբայրութեան և հաւասարութեան սկզբունքը մարդկանց մէջ։ Զընայած այս սքանչելի և մեծ խորհրդին, եկեղեցական հայրերը յետագայ դարերում այդ արարողութիւնից հանեցին համբոյրը և թողին միայն «ողջոյնը», որ անկասկած միենոյն մեծ խորհուրդն ունի, սակայն շատ շատերի համար այժմս դժբախտաբար մի լոկ անմիտ ծիսակատարութիւն է դարձել... Հարց է թէ՝ ինչի՞ այդ խորհրդաւոր արարողութիւնից հանւեց համբոյրը։ Ըստ իս, դա միայն անպատեհութիւնների առաջն առնելու համար չէր, այլև բնազդաբար զգալուց դրա հակառողջական կողմը, որին արժէ նւիրել մի առանձին գլուխ այժմեան գիտութեան հայեացքներով։

Գ Լ Ո Ւ Խ III.

Համբոյրի վտանգները

Իուսաստանի հայերիս մէջ սկսում է տարածել մի շատ անպիտան սովորութիւն, այն է՝ շրթունքով համբուրւելու, «պոօշտու» նոր «ադաթը»։

Դա Իուսիայի ռամիկ ու միջին դասի ադաթըն է, որ մարդիկ իրար հանդիպելիս, մանաւանդ մեծ տօներին (նոր տարուն, ծննդեան, Զատկին), համբուրում են իրար պոօշներ. այն

էլ ոչ թէ մէկ, այլ անպատճառ երեք անգամ։ Բացի այդ, մէկը՝ որ օտար տեղ է գնալու կամ օտարութիւնից վերադառնում է, պէտք է իր շուրջը հաւաքւած բոլոր բարեկամների և ծանօթների շրթունքը համբուրէ, պոօշտի անէ, որովհետեւ այդ պահանջում է սովորութիւնը. իսկ ում յայտնի չէ, թէ միանգամ ընկունւած աղաթից շեղւելը մարդկանց համար շատ դժւար բան է։

Ցաւալին այն է, որ հայերիս մէջ այդ վատթար աղաթը մեր քաղաքակրթւած դասից է տարածւում հասարակ ժողովրդի մէջ. վերջինս նմանութիւն անելով «ուսում առածին»՝ պոօշտի անելը համարում է քաղաքավարութեան նշան, այսինչ ամեն բանիմաց մարդ պարտական է ոչ միայն օրինակ չըտալ, այլև հասկացնել ժողովրդին ընդհակառակը, թէ ողջոյնի ժամանակ համբուրւելը ամենագուեհիկ և ամենավսասակար սովորութիւն է։ Այդպէս էլ արել են բնազդաբար եկեղեցու հայրերը, արգելելով պատարագի «ողջոյնի» ժամանակ համբոյրը։

Ահա այդ բանի նորանոր ապացոյցներ.

ա) Սնհամար զիտողութիւններով ապացուցւած է, որ հարբուխը, հարբխատենդը (գրիպպ), բկացաւերը, նոյն իսկ դիֆթերիտը, սիֆիլիստը և այլն անցնում են մէկին միւսից շատ անգամ համբոյրի միջոցով, որովհետեւ այդ ճանապարհով հիւանդի պոօշների վրայի աննկատելի վարակաթոյնը շատ հեշտ կերպով ընկնում է առողջի պոօշներին ու քթի խոռոչին և վարակում։ Ու-

բեմ՝ երեխաներին փաղաքշել ուղելով, վերցնել և նրա շրթունքը համբուրելը ուղղակի մեղք է:

բ) Ինչի՞ թոքախտաւոր ծնողների երեխաները շատ մասով թոքախտ են ստանում, քանի որ այժմս ապացուցւած է, որ բարձրացաւը ժառանգաբար չի անցնում սերնդին:—Որովհետեւ, կրպատախանեմ, թոքախտաւոր ծնողները չեն քաշում իրանց երեխաներին անդադար համբուրելուց: Համբոյրի մեղաւորութիւնը այս դէպքում ապացուցւում է նրանով, որ ոչ այնքան հօր, որքան մօր թոքախտն է անցնում զաւակին և այս՝ այն պարզ պատճառով, որ մայրը բնականաբար աւելի շատ է շփւում և համբուրում իր զաւակին:

գ) Յայտնի է, որ Ռուսիայի շատ ու շատ գիւղերում սարսափելի կերպով տարածւած է վատ ցաւը—սիֆիլիսը: Քննելով սրա պատճառները, առողջաբանական մամուլը վաղուց արդէն վերագրած է սիֆիլիսի տարածումը գիւղերում համբոյրի վատ սովորութեան, երբ վարակւած ուամիկները քաղաքից վերադառնում են գիւղ:

Օրինակներ առնենք մեր կեանքից: Ում յայտնի չէ, որ Բագւի մեր ըանտրները վատ ցաւով վարակւած վերադառնալով գիւղերը՝ տարածել են այդ ցաւը մեր գիւղական ժողովրդի մէջ համբոյրի միջոցով, քանի որ այդ ցաւով բանւածները յատուկ բշտեր և խոցեր են ունենում բերանի մէջ, պոօշների, լեզւի, քիմքի վրայ, և դրանց վարակիչ մասերը համբուրելիս փոխուում

են ուրիշին: Շատ օրինակներ կան, որ վարակւած վաճառականը, վերադառնալով օտարութիւնից և ամաչելով իր մեղքը խոստովանելու, ոչ միայն վարակել է իր ամուսնուն, այլ և համբուրելով ըստ նոր սովորութեան իր բոլոր ծանօթ բարեկամների հետ՝ սրանցից մի քանիսին էլ տւել է իր վրայի «ապրանքը» (վատ ցաւը): Ինձ յայտնի է մի դէպք, երբ աղքական վաճառականից այս եղանակով վարակւած էր մի քահանայ, որը շարունակում էր իր քահանայագործութիւնը, չընայած իմ բժշկական արգելքին: Այս քահանան վերջը ուղեղի սիֆիլիսից վախճանւեց: Յայտնի են դէպքեր, երբ առաջնորդին յայտնի է եղած քահանայի վատ ցաւ ունենալը և առաջնորդը չի արգելել նրան քահանայագործութիւնը...

Բայց ահա ինչ դէպք էլ է պատեհում: Եթէ դու մի քանի անձերի շրջանում գիտակցաբար հրաժարւես համբուրելուց քեզ յայտնի՝ գեռ բոլորովին չառողջացած սիֆիլիսու հիւանդի հետ, որ անգիտակցաբար կամ աղաթի զօրութեամբ դէմ է անում քեզ իր պոօշները,— գիտես թէ ինչ դուրս կրգայ... Այդ բարեկամը քո ինքնապաշտպանութեան վարմունքը պիտի համարի մեծ անպատճեն կամ սկանդալ իր դէմ... բարեկամութեան կապերը քանդուում են, անվերջ անբաւականութիւններ... Պատմածս իմ զիմով անցած մի դէպք է:

Այս ամեն փաստերից յետոյ, ինդրեմ ասէք,

ի՞նչ հարկ կայ, որ մարդս իր անձը ենթարկի այդշափ վտանգի և անպատեհութիւնների, հետեւելով մի տղեղ նորամուտ սովորութեան... Հաւ չի մինիլ արդեօք, որ այդ սովորութիւնը մեր մէջ բոլորովին չըմտցնենք, քանի որ մեր նախնիքը, մեր պապերը այդ սովորութիւնը չունեն և մեր եկեղեցու հայրերն էլ «ողջոյնի» ժամանակ համբոյը արգելել են: Բարեկելու պատեհ ձեն է մեր եկեղեցական «ողջոյնի» ձեզ, որ մարդիկ իրար մօտենալով գլուխ զլսի կողմը երկուերեք անգամ տանում բերում են և դրանով վերջանում է բարեկը: Մեր ժողովրդի մէջ առհասարակ բարեկլս փոքրը մեծի ձեռը պիտի համբուրէ, իսկ մեծը՝ փոքրի թուշը կամ ճակատը:

Մահմեդականներից մտած է մեր ժողովրդի մէջ մի անարդար սովորութիւն, որ կանայք բարեկիս պէտք է համբուրեն հասակաւոր տղամարդկանց ձեռը, որովհետեւ նրանց հայեացքով իգական սեռը միշտ ստոր է համարւում արական սեռից:

Եթէ նայենք արևմտեան Եւրոպայի քաղաքակրթւած ազգերի սովորութեան, շրմունք համբուրելը մնում է ամուսինների մէջ, իսկ բարեւում են ձեռք ձեռքի տալով կամ ձեռքի շարժումով:

Առհասարակ եթէ գիտութիւնը ուշք դարձնէ մարդկանց բարեկելու ձեի առողջաբանութեան, հաստատ կարելի է ասել, որ ամենաընտիրը պիտի համարւի տաճիկների և պարսիկների սովո-

րութիւնը: Սրանք բարեկի ժամանակ պոօշ համբուրելու աղաթ չունին, նոյնպէս զիխարկ ըարձրացնելու (որ ձմեռը գլուխը չըմբռեցնեն) և ձեռք տալու, այլ ձեռքը ճակատին տանելով ողջունում են, ինչպէս այդ այժմ ընդունւած է գրեթէ բոլոր ազգերի զինուրական դասի մէջ:

Իսկապէս իրարու անպատճառ ձեռք տալու Եւրոպական սովորութիւնն էլ մի գովելի աղաթ չէ: Իսկական քաղաքակրթ ընտանիքներում ընդունւած է, որ հիւր եկողը չըմօտենայ ծանր ու բարակ ամենի ձեռքը բռնելու, այլ՝ ձեռը քոնքին բարձրացրած՝ ամենին միանգամից քաղաքավարի գլուխ իջեցնի պլծնի:

Մեր փոքր քաղաքներում և գիւղական շըրջաններում ժողովրդի առողջապահութեան համար կարևոր է, որ զարգացած մարդիկ աշխատեն «պոօշտու» անտեղի և վնասակար սովորութիւնը մեր միջից անհետացնել: «Հակապոօշտեան» կամ համբոյի գէմ ընկերութիւններ այժմ տարածւում են Ամերիկայի զանազան քաղաքներում. ինչպէս մենք հիմնած էինք անցեալ դարու 70-ական թւականներում—Աղէքսանդրապոլում, ինչպէս հիմնեց Աղէքսանդրապոլի մի երկու գիւղում պ. Նալբանդեանը 90-ական թ. թ. (Առողջապահիկ թերթ 1906 թ.)

ԳԼՈՒԽ ԽՎ. ԽՎ.

Եկեղեցական նստարանները եւ երգեցողութիւնը վերը ես շօշափեցի եկեղեցական առողջա-

բանութեան մի քանի հարցեր և փորձեցի օրինակներով ապացուցանել, որ կրօնական արարութիւնների և եկեղեցական կարգադրութիւնների մի մասը հիմնւած է ոչ միայն բարոյական, այլև ժամանակի առողջաբանական պահանջների վրայ:

Սակայն այժմ մենք տեսնում ենք այսպիսի եկեղեցական կարգեր, որ բոլորովին հակառակ են մեր հասարակութեան այժմեան սովորութիւններին և առողջաբանական այժմեան հայեցքներին, ուրեմն՝ դրանք փոփոխութեան կարօտ են, քանի որ եկեղեղին որքան կրօնական, նոյնքան և հասարակական հաստատութիւն է, որ իրաւունք չունի հասարակաց առողջութեանը մազաշափ վնասելու և որը պէտք է ձգտի յաճախող հասարակութեանը ամեն յարմարութիւններ տալու, քանի որ եկեղեցին ժողովրդի համար է և ոչ թէ ժողովուրդը եկեղեցու համար:

Բերենք դարձեալ օրինակներ:

ա) Խնչու և որպիսի աւանդական հիմունքով մեր հայ եկեղեցիներում ժողովուրդը ստիպւած է ժամասացութիւնը կանգնած լսելու: Յիշաւի, որոշ արարողութիւնների ժամանակ կարճ միջոցով չոքելու իրաւունք և սովորութիւն կայ, բայց քանի որ մեր քաղաքների ժողովրդի մեծամասնութիւնը չոքելուց յետ է սովորած, հարկաւ նա ստիպւած է բոլոր ժամասացութեան ժամանակ կանգնած մնալ: Հիմի հարց է առաջ դալիս. միթէ հակառողջական չէ խառն ի խուռն բաղրութեան մէջ ժամերով կանգնած լսել սաղ-

մուներ, շարականներ, առաքեալների, մարգարէների գրքեր, աւետարանի այս կամ այն գլուխը, երեմն քահանայի կամ վեղարաւորի քարոզը, որոնք բոլորը տեղի ունին թէ պատարագի և թէ այլ տօնական հանդէսների ժամանակ:

Փորձերից յայտնի է, որ $\frac{3}{4}$ ժամ ուշադրութիւնով մի հետաքրքրական բան լսելը արդէն յոզնեցնում է մարդուս ուղեղը, ուր մնայ թէ ժողովրդի մեծամասնութեան շատ մասով անհասկանալի գրաբարը ժամերով լսելը... Բացի այդ, բժշկական դիտողութիւններից նոյնպէս յայտնի է, որ ժամերով կանգնած մնալը, եթէ այդ կըրկընում է յաճախ, պատճառ է դաւնում ոտքերի սեերակների (վենա-ների) ուռեցման, որի հետևանքն են յարատե մսային ցաւեր և այն: Մեր ժողովրդի մեծ մասը այժմս միայն կիրակի օրերը և մեծ տօներին է եկեղեցի գալիս, այն էլ ժամասացութեան վերջումը, որ ինչ է՝ 10—20 րոպէից աւելի կանգնած չըմնայ: Անշուշտ այս բանը ուրիշ պատճառներ էլ ունի, սակայն գլխաւորն այն է, որ ժողովուրդը բնազդաբար չի ուղում ենթարկւել ամեն օր անյարմար և վերին աստիճանի ձանձրալի դրութեան:

Եթէ այդպէս է, ինչի՞ ուրեմն մեր այժմեան եկեղեցական հայրերը չեն գնել տալիս եկեղեցիներում նստարաններ և աթոռներ, որ ծխականները կամ ժամեորները չըխառնւեն եկեղեցում, ինչպէս բազարում ժողովւած ամբոխը իրար հըրհըրելով, թիկունք թիկունքի զարնելով, այլ ներս

մտնեն, կարգով նստեն նստարանների և աթոռների վրայ, և հանգիստ հետևեն իրանց աղօթքին ու ժամասացութեանը։ Այս բանի դէմ ոչ մի սահմանած կամոն կամ արգելք չըկայ. միայն աւանդութիւնն է պատճառ բերում, այսինքն՝ ի հնուց եկեղեցում նստարանների կամ աթոռների սովորութիւն չըլինելը։ Քննենք այդ աւանդութիւնը։

Հին ժամանակ, ինչպէս այժմ մեր գիւղերում, ժողովրդի նստելու սովորական ձևն էր չոքելը և ծալապատիկը, ինչպէս է այդ այժմս Տաճկաստանի և Պարսկաստանի նոյնիսկ հարուստ տներում։ Մեր նախնի եկեղեցական հայրերը թոյլատրած էին ծխականներին բերել եկեղեցի իրանց կարպետը, խմիրը կամ մինոյէրը և չոքել ու նստել դրանց վրայ, ինչպէս իրանք նստում էին դասումը, երբ յոզնում էին կանգնելուց։ Արդ, երբ մեր քաղաքների ժողովուրդը յետ սովորեց չոքելուց և ծալապատիկ նստելուց և աթոռների ու նստարանների ընտելացաւ, բնական է, որ այսօր մեր հոգեորներն էլ, եթէ ուշադիր լինէին դէպի ժողովուրդը, պէտք է նոր սովորութեան համեմատ աթոռներ և նստարաններ մտցնէին եկեղեցում ժողովրդի համար։ Եթէ այդ բանը մեղք լինէր, կաթողիկոս, եպիսկոպոս, առաջնորդ իրանց համար աթոռներ դնել եկեղեցում թոյլ չէին տալ, և թոյլ չէր տրւիլ, որ ծերունիների, տկարների համար եկեղեցու պատերի մօտ նըստարաններ լինին, ինչպէս այժմ շատ տաճարնե-

րում։ Քանի որ երկար կանգնած ժամւորը ամեն անգամ նոյն տկարի դրութեանն է համառւմ, հետեաբար նրա համար էլ աթոռ պիտի լինի եկեղեցում, շատ պարզ է։

Պօլսի մի քանի հայ եկեղեցիներում նստարաններ և աթոռներ դնելու սովորութիւնը ընդունւած է։ Պարիզի Մանթաշեան հայ եկեղեցում նոյնն է։ Այս բանում որևէ դաւանաբանական կամ եկեղեցական արարողութեան խնդիր չըկայ, այլ զուտ յարմարութեան խնդիր է։ Որտեղ հայ ծուխը ցանկանայ եկեղեցում խսիրների, գորգերի փոխարէն աթոռներ դնել, այստեղ հոգեոր իշխանութիւնը հակառակելու բան չունի։ Երանի թէ կամաց-կամաց վերջ դրւէր մեր եկեղեցիներում ժամւորների խառնաշփոթ և անկարգ համախմբւելուն։

բ) Գալով երգեցողութեան, ում յայտնի չէ, թէ ինչ մեծ ազգեցութիւն ունի երգը մարդուս հոգեկան դրութեան վրայ, թէ միակերպ, աններդաշնակ երգեցողութիւնը եկեղեցիներում որպիսի մեծ ձանձրոյթ և ներւային գրգռմունք կապիսի մեծ ձանձրոյթ և ներւային գրգռմունք կարող է առաջացնել և թէ, ընդհակառակը, կանոնաւոր եկեղեցական երգեցողութիւնը որպիսի խոր ազգեցութիւն ունի բարձր հոգեկան միսիթարութեան համար, նոյն իսկ ներւարութութեան գործում։ Կարելի է ասել, որ մի ազգի եկեղեցու պատճեն կաթողիկոս է այս եկեղեցութեան զարգացումով կարելի է ցական երգեցողութեան զարգացումով կաթողիկոս է այդ ազգի քաղաքակրթութեան սատիճաչափել այդ ազգի քաղաքակրթութեան սատիճաչափել։ Այս հայեացըով է, որ մեր կաթողիկոսների

շարքից, սկսած Շնորհալուց մինչև Գէորգ ԱՎ կաթողիկոսը, նրանք, որոնք հեղինակաւոր և պատկառելի Հայրապետի անուն են թողած, իրանց ազգաշխատ գործերի մէջ երբէք չեն մոռացած մեր եկեղեցական երգեցողութեան զարգացմանը նըպաստելու ամեն ջանքով՝ թէ իրանք շարականներ հնարելով և եղանակներ տալով, թէ հայ երաժշտապետներին քաջալերելով և թէ հայոց հոգևոր դպրոցներում այդ առարկային առաջնակարգ տեղը տալու թելագրումով *):

ԳԼՈՒԽ Վ.

Ծ Ն Ն Ո Ե Ա Ն Հ Յ Ջ Ա Ն

Շարունակելով եկեղեցական առողջաբանութեան խնդիրների ուսումնասիրութիւնը (Էտիւդ), պէտք է այժմ հերթով քննենք այն հարցերը, որոնք ծագում են եկեղեցու մասնակցութիւ-

*) Իսկ մեր կաթողիկոսներից և եպիսկոպոս առաջնորդներից ապիկարները իրանք ոչինչ չեն արել և նոյն իսկ ժողովրդի ջանքերը այդ մասին՝ ջլատել են. Օրինակ բերեմ Եքմալեան երաժշտապետի գործը մեր եկեղեցու պատարագի եղանակները երբոսպական նօթաներով եռաձայն կամ քառաձայն ներդաշնակութեամբ երգելու, որ անկասկած մի առաջադիմութիւն էր մեր եկեղեցական երգեցողութեան համար. Մի երկու անձինք Թիֆլիսում այս դարում սկզբում Մեղենեան վաճառականի կտակով 5000 ռ. դրամագլուխ ճարեցին այդ գործը հրատարակելու կայզցիկում հետևեալ պայմաններով. որ հրատարակութեան 200 օրինակը յօգուտ

նից մարդկային կեանքի ամենագլխաւոր շրջաններին, այն է՝ ծննդեան, ամուսնութեան և թաղման: Պէտք է հետազոտենք, թէ այդ շրջաններին վերաբերեալ եկեղեցական կարգերը, բայց կրօնականը և բարոյականը, ունին արգեօք և առողջապահական հիմունք և թէ վերջինները որքան համապատասխան են այժմեան առողջաբանութեան պահանջներին:

ա) Ծննդեան շրջանի եկեղեցու մասնակցութիւնը նախ այն է, որ մաշտոցով սահմանւած է ծննդկանի նկատմամբ կարգ քառասնօրէի (ժողովրդի մէջ քառունք է կոչւում), այսինքն՝ ծըննդկանը պէտք է ծննդաբերութիւնից յետոյ քառասուն օր անկողնում մնայ, հիւանդի դրութիւնը պահպանի: Երբ 40 օրը լրանում է, կամ քահանան գալիս է ծննդկանի տուն, որոշեալ ազօթք և պահպանիչ ասում մօր և զաւակի գլւ-

հեղինակի ծախւի, իսկ մնացած 400 օրինակը ծախւի կօնսիստօրիայի կողմից և դրամագլուխը (գրքի գինը լինելու էր 10—20 ռ.) դրւի Թիֆլիսի հոգևոր կօնսիստօրիայի հովանաւորութեան տակ՝ Եքմալեանի և այլ երաժիշտների եկեղեցական ուրիշ եղանակները նօթաներով հրատարակելու և այդ գործը պարբերաբար շարունակելու: Արդ՝ մինչև օրս յայտնի չէ, թէ Լայպցիգի հրատարակութեան օրինակները ում ձեռքումն են, որովհետև Խրիմեան կաթողիկոսը և նրա ժամանակի Թիֆլիսի առաջնորդները իրանց իրաւանց յանձնւած գոյքին տէր չըկանգնեցին և եկեղեցական երաժշտութեան գործի զարգացմանը ամենակին նշանակութիւն ժանով. հեղ.

խին, կամ ծննդականը նորածնին հետը վերցրած՝ զնում է եկեղեցի, ուր քահանան կատարում է սահմանած կարգը՝ մօր կողմից 40 անգամ ծունը դնել, երեխային խորան տանել և այլն։ Այս բանից յետոյ ծննդականը իրաւունք է ստանում իր սովորական կեանքը սկսել, տնտեսական աշխատութիւնները կատարել և այլն։ Այս կարգը վերջին ժամանակները մեծ քաղաքների հայ ընտանիքներում այլ ևս չի գործադրում, իսկ մեր փոքր քաղաքներում և գիւղերում փոքր իշխան պահպանած է։ Տեսնենք հիմի՝ ինչ է սրա նշանակութիւնը և որքան մոռացութեան տրւելու արժանի է այս կարգը։ Մեր եկեղեցին այս սովորութիւնը փոխ առած է Մովսէս մարդարէի կարգադրութիւններից և բարոյականի հետ միասին ունի զուտ առողջապահական միտք ևս։ Առաջնը՝ ողջախոհութեան սկզբունքն է ի նկատի առնւած, որ քառասուն օրից առաջ ամուսնական մերձաւորութիւն չըլինի և ապա, որ նշանակած օրից վաղ վեր կենալով և տնական աշխատութիւններ կատարելով՝ ծննդականը իբր թէ հիւանդութիւնների չենթարկւի։

Այս վերջին տեսակէտը այժմեան գիտութիւնը, երկարատև փորձառութեան հիմունքով, մերժում է և շատ բաւական է համարում առողջ ծննդականի համար կանոնաւոր ծննդաբերութիւնից յետոյ 8—9 օր անկողնում մնալը, որովհետև այդպէս վաղ վեր կենալը, ըստ այժմեան գիտութեան, մինչև անգամ նպաստում է

աւելի շուտ արգանդի սովորական չափերը ստանալուն և կարգի մտնելուն։ ուստի գործնական տեսակէտով 40 օրից առաջ վեր կենալը մ'եղք չըպիտի համարւի։ Իսկ ինչ կըվերաբերի ամուսնական մերձաւորութեան, ցանկալի է, որ ժողովուրդը պահպանի քառասունքի ամուսնական պահքը, որովհետև, ըստ գիտութեան, ինչպէս նախնի ժամանակներում, այնպէս էլ այժմ ծընընդկանի արգանդի արտադրութիւնները, աղտեղութիւնները փոքր առ փոքր մաքրում են և բոլորովին վերջանում ծննդաբերութիւնից 30—40 օր յետոյ։ Բնական է, որ այդ ժամանակամիջոցում (40 օրւայ ընթացքում) ամուսնական մերձաւորութիւնը պէտք է մեղք, «հարամ» համարւի։

ԳԼՈՒԽ ՎI.

Մ կ ը տ ո ւ թ ի ւ ն

Ծննդեան շրջանին վերաբերեալ եկեղեցական կարգն է մ'կըտութիւնը։ Սա ըրիստոնէական կրօնի մեծ խորհուրդներից մէկն է։ Այս արարողութեան մէջ մեր նիւթին, այսինքն առողջաբանութեան վերաբերեալը այն ինդիրն է նախթէ եկեղեցու ասազանը որ աստիճանի մ'արդութեան մէջ է։ Ում չի պատահած տեսնել մեր եկեղեցու գաւիթներում երբեմն 5—6 կնունք իրար ետեից։ Ի՞նչպէս է կատարում մկրտութիւնը այդ դէպքում։—աւագանի մէջ մի ան-

գամ լցւած ջրում քահանան (որպէս զի շատ ժամանակ չըկորցնի), առանց ջրի տաքին ու պաղին նայելու, հերթով մկրտում է մէկին, յետոյ երկրորդին միևնոյն ջրում, յետոյ երրորդին... վերջապէս—վեցերորդին։ Հիմի բնականաբար հարց է ծագում. այդ վեց երեխաների մէջ կարող էր պատահել մէկը կամ միւսը, որը վարակիչ հիւանդութիւն ունենար։ —Դա անկարելի բան չէ, դժբախտաբար շատ կարելի։ Քահանան առողջին վատառողջ վարակիչ երեխայից ջոկել չի կարող, եթէ անզամ մտածելու լինի այդ մասին. (իսկապէս նա մտածում է միայն բոլորին շուտով մկրտելու մասին)։ Այդ, որ լուսամիտ հայ գերդաստանը այժմեան ժամանակս մեծ հոգսի մէջ չըպիտի ընկնի, երբ իր առողջ նորածնին ուղարկում է եկեղեցի մկրտութեան, ի նկատի առած այդպիսի դէպքերը... Դիցուք թէ միայն իմ երեխան պէտք է մկրտւէր եկեղեցու աւագանում, որտեղ նոյն օրը կամ մի քանի օր առաջ նոյն աւագանում մկրտւած են եղել տասնեակ ուրիշ երեխաներ... Նորից հարց է ծագում, թէ աւագանի 'ջուրը հեռացնելուց յետոյ, չէ՞ր կարող արգեօք այդ աւագանի պատերի վրայ՝ առաջ մկրտած մի որևէ վարակւած երեխայից վարակաթոյն մնացած լինել։ —Այն, կարող էր այդ թոյնը մնացած լինել չորացած դրութեան մէջ և կենդանանալով իմ երեխայի համար ածած ջրում՝ վարակել խղճուկ անմեղին։ Այս հիման վրայ ես իրատունք ունիմ պահանջելու իմ քահա-

նայից, որ նա երբէք միեմնոյն ջրում՝ ըազմաթիւ երեխաներ չըմկրտի, երկրորդ՝ որ նա բարեհաճի ինձ թոյլ տալ նախ մաքրել աւազանը եռուն տաք ջրով (որ սովորաբար սպանում է հիւանդաբեր սաղմերի մեծ մասը) և ապա երեխայիս ընկղմնել նոր ածած մաքուր ջրի մէջ։

Այս իրաւունքը չի կարող զլանալ հայ ծընդուներին ոչ մի քահանայ, ոչ մի եպիսկոպոս և ոչ իսկ կաթողիկոսը, քանի որ մկրտութեան աւագանի մաքրութեան խնդիրը ոչ մի դաւանական կամ նոյն իսկ աւանդական հիմք չի քանդում, այլ ամենաստարբական առողջաբանական պահանջ է։ Որքան էլ որ հայ լուսամիտ ծնողները ջերմեռանդ հաւատացող լինին եկեղեցու աւազանի սրբութեանը (որովհետև օծւած է) և սուրբ միւռօնի զօրութեանը, այնու ամենայնիւ չըպիտի կարողանան իրանց մէջ իսեղել զզւանքի զգացմունքը, երբ 4—5 օտար երեխայ մի բուռ ջրում լողացնելուց յետոյ, քահանան կամենայ իրանց երեխային էլ նոյն ջրի մէջ ընկղմել... Այս է հիմնական պատճառը, որ չընայած երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսի խիստ կոնդակին, որով արգելում էր քահանաներին արժեքում կնունք կատարելը, այս նորամուտ սովորութիւնը մեծ քաղաքներում օրէցօր աւելի է տարածւում, միշտ երեխայի հիւանդութիւնը պատրւակ բռնելով։ Պէտք է ասեմ, որ հանգուցեալ կաթողիկոսի կոնդակը իր ժամանակի հայ հասարակութիւնից լաւ ընդունելութիւն դտաւ,

որովհետև ազգասիրական էր համարւում, պարունակելով պահանջ կամ ձգտումն օտար եկեղեցիներին չընմանելու... Բայց և այնպէս, ես գիտեմ մի քանի ծնողներ, որոնք թէև մեծ յարգանքով և գովեստով էին վերաբերում այդ կոնդակին, բայց երբ քանը եկաւ իրանց երեխայի մկրտութեանը, նրանք նախադասեցին այս սուրբ խորհուրդը տանը կատարել տալու, վերը յիշածս սովորական պատրւակով... Կըհարցնէք՝ ինչի՞ Որովհետև երեխայի առողջութիւնը ապահովելը կեանքի և մահի խնդիր է, որի առաջ տեղի են տալիս սովորաբար վերացական երկրորդական ըզգացումները։ Այս բանը ես յիշեցի այստեղ, որովհետև շատ խրատական է։

Եթէ իւրաքանչիւր կնընքատէր խնդիրի իր քահանային, նախ քան մկրտութեան խորհուրդ կատարելը, եկեղեցու աւազանը եփ եկող ջրով մաքրել, յետոյ մաքուր սառը ջուր ածել՝ տաք ջուր խառնելով, — սրան ընդդէմ չի լինիլ քահանան։ Դրա համար, ի հարկէ, վաղօրօք պիտի հոգացւի տաք ջրի պատրաստութիւնը և ժամկոչի վարձը, և այս կերպ կամաց-կամաց մեր բոլոր եկեղեցիներում այդ կըդառնայ ընդհանուր սովորութիւն։ Այս ժամանակ թէ տգէտ և թէ լուսամիտ գերդաստաններ հաւասար հաւատով ու անվախ կրտանեն իրանց երեխային մեր եկեղեցու ծոցում մկրտելու, այս ժամանակ կաթողիկոսական կոնդակի էլ հարկ չի լինիլ։ Եւ, ընդհակառակը, քանի որ այդ գեղեցիկ սովորութիւ-

նը ամեն եկեղեցում տարածւած չէ, որքան կամենաք ազգասիրական կոնդակներ և կանոններ գրեցէք, նրանք կըմնան մեռած տառ. — խուսափողը հնար կըդանի խուսափելու ձեր կանոնից։

Ահա համառօտ նկարագրութիւնը եկեղեցական օրինակելի աւազանի։ Մը եկեղեցին որ միջոց ունի, պէտք է հոգայ, որ աւազանի ջուրը միշտ մաքուր լինի, այսինքն փոխւի ամեն մի նոր մկրտուղի համար։ Այդ նպատակով կարելի է մը-կրտութեան աւազանից վեր, խորանից դուրս, մի ջրամբար գնել սառը ջրի համար և ինքնաեռի նման մի մեքենայ՝ ձեռաց տաք ջուր պատրաստելու համար։ Այս վերջին խորանը, ուր դրւած կըլինին ջրամբարն ու ջուր տաքացնելու կաթսան, պիտի բաժանւած լինի աւազանի խորանից մի բարակ պատով, որի միջով երկու խողովակ կըքերեն դէպի մկրտութեան աւազանը՝ մէկը տաք, միւսը սառը ջրի համար։ Խողովակները կունենան ծորակներ (կրաններ)։ Այսպիսով միշտ կարելի է հարկաւոր տաքութեամբ ջուր լցնել աւազանի մէջ և, որ գլխաւորն է, ամեն մկրտութեան համար առանձին ջուր ունենալ։ Աւազանի տակից մի ուրիշ խողովակ ջուրը կըտանի ցած, դէպի մի հոր կամ գետ։ Այս խողովակի ծակը, ի հարկէ, պիտի փակւի խցանով, երբ ջուր կըլցնեն աւազանը։ Այսպիսի աւազանի մէջ կարելի է մի ժամւայ ընթացքում թէկուզ 10—12 երեխայ մկրտել, և վտանգ չի լինիլ, քանի որ ամեն մի մկրտութիւնից յետոյ

աւազանը անմիջապէս լւացւում է եփ տւած ջրով և նորից ծորակներով իստակ ջուր լցւում։ Այսպիսի մի խորանիկ կարելի է շատ պարզ և էժան շինել։

Գ Լ Ա Խ Խ Վ Ի I.

Հաղորդութեան առողջաբանութիւն։

Մկրտութեան արարողութեան մէջ առողջ ջբանական ինդիր է ծագում նաև երեխաների հաղորդութեան ձեի մասին, որի հետ կապ ունի առհասարակ հաղորդութեան առողջաբանութեան հարցը։

Վեր առնենք նոյն գէպքերը, երբ եկեղեցում միննոյն օրը հանդիպում ենք 5—6 կնունքի։ Աւազանի ջրի մէջ երեխաներին ընկղմելուց յետոյ, քահանան պիտի հաղորդէ բոլորին։ Բըթամատը և ցուցամատը մասնատուփում սեղմելով մասունքին՝ նոյն երկու մատը տանում է առաջին երեխի բերանը, քսելով նրա բերնի խոռոչին և լեզւին, յետոյ նոյն գործողութիւնը շարունակում է 2-րդ երեխի վրայ։ յետոյ այս երեխի բերանից մկրտողի մատները անցնում են մասնատուփին, որտեղից՝ 3-րդ երեխի բերանը և այսպէս շարունակում է մինչև 6-րդ երեխան։ Վերը պարզեցինք, որ այժմեան առողջաբանական տեսակէտով մէկ երեխի մարմնից աւազանի պատերի և ջրի միջոցով տեսակ-տեսակ հիւանդութիւններ կարող են փոխւել միւսին, եթէ յիշածա

միջոցները չըգործադրւին։ Նոյնը կըլինի և բերանի միջոցով։

Գալով հասակաւորների հաղորդութեան, պէտք է յիշեցնենք մեր ընթերցողներին համբոյրի վտանգների գլուխը (գլ. III)։ Այստեղ բաւական պարզեցինք, թէ որպիսի հիւանդաբեր մանրէներ (միկրօբներ) բերանի մի աննկատելի շիֆլորձունքի միջոցով կարող են մէկից միւսին փոխադրւել։ Հարկաւ նոյնը կըլինի, երբ քահանան իր մատները մէկի բերանից հանած, յետոյ մասունք վերցնելով, տանի միւսի բերանը։ Անկարելի է չըհամաձայնել, որ այժմեան կրթւածդասերի սովորութիւններին բոլորովին հակառակ է մի որևէ քահանայի մատները իր բերանն առնելը, ուր մնայ թէ՝ երբ այդ մատները հինգ-վեցտասը ուրիշի բերանն էլ մտածելած են...

Ուրեմն պարզ է, որ մի ժողովուրդ քաղաքակիրթ սովորութիւնների ընտելանալով՝ տարէցտարի աւելի ստւար բազմութիւնով պիտի խուսափէ հաղորդւելուց, եթէ այժմեան եկեղեցու հայրերը չըհոգան հաղորդութեան խորհուրդը առողջապահ եղանակով կատարելու։

Թւում է թէ այս արտաքին եղանակի (և ոչ թէ բուն դաւանական խորհրդի) փոփոխութեան ինդիրը փոքր ի շատէ հասունացած է մեր մէջ ևս, քանի որ քանի տարի առաջ նոյն իսկ մի քահանայ, Ղազախի հայր Ապրէսեանց, Վ. Արծրունու «Առողջապահիկ թերթի» մէջ (1905 թ. № 14) իմ կարծիքն էր հարցնում թէ՝ փոփոխման

կարօտ չէ արդեօք հաղորդութեան խորհրդի կատարման եղանակը։ Այդ հարցի պատասխանը առ այժմ այս է։

Եթէ հաղորդութեան կատարումը կապւած է մասունքը (Քրիստոսի մարմնի և արեան խորհրդանշան) ընդունելու հետ և ոչ թէ այս կամ այն հոգևորականի մատների հետ, ապա ուրեմն այդ մասունքը քրիստոնեան կարող է ընդունել մի որևէ առողջապահ եղանակով, որ պիտի ուրոշէ մեր ապագայ ընդհանուր եկեղեցական ժողովը։ Այժմ այդ եղանակի մասին երկարելք աւելացր եմ համարում. բայց տեսնենք, թէ ինչ է կատարում այս հարցի առթով ուրիշ ազգերի մէջ *): Օրինակ՝ թժ. Ռիուտովցելը պատմում է, թէ անցեալ դարու ուժսունական թւականներում, երբ դիֆթերիտ - բգացաւը շատ սարածւում էր Ռիուտիայի հարաւում, Խերսօնի պրաւօնլաւ առաջնորդը կարգադրեց ամեն անգամ հականեխման ենթարկել գդալիկը, որով սովորութիւն էր սրբութիւն տալը։

Ուրիշ օրինակ: Զւիցերիայի Բերն (Bern) կանտոնի վարչութիւնը մի օրէնսդրութիւն հրատարակեց 1906 թւին, որով արգելում է հաւատացեալներին սկիհից ուղղակի շրթունքներով գի-

*) Յամենայն դէպս պէտք է արգելվի մեր քահանաներին՝ մասունքը երկար ժամանակ գրապանի փոքրիկ մասնատութերում պահելուց բորբունած դրութեամբ հիւանդներին հաղորդելը, ինչպէս այդ սովորական է։ Ժան. հեղ.

նին մասնով խմելը (ինչպէս նրանց աւանդութիւնն էր) և պատկրւում է այսուհետեւ փոքրիկ, այդ բանին միայն յատկացրած և միշտ մաքուր պահպանւած անձնական գդալներով ընդունել «սրբութիւնը»։ Ի՞նչ պատճառով կամ ի՞նչ հիմունքով այսպիսի մի վճիռ կայացաւ, որ փոփոխում է մի դարաւոր սովորութիւն կամ կարգ։

Այս վճիռը թեթև կերպով չէ արւած, այլ հարցը նախապէս ամենալուրջ քննութեան ենթարկւեց։ Երկու նշանաւոր մանրէաբանների (քաքտերէօլոգների) յանձնւած էր մանրամասն հետազօտութիւններ կատարել ինդիրը պարզելու համար։ Շատ երկար կը ինի պատմել այս հետազօտութիւնների մանրամասները. այսքանը կասեմ, որ Բերնի յանձնաժողովի եզրակացութիւնները վերաքննութեան ենթարկւեցին յետոյ Ժընկ (Geneve) քաղաքի ուսումնականներից։ Սըրանք էլ եկան նոյն եզրակացութեան, ինչ որ Բերնի յանձնաժողովը, այն է թէ՝ երբ միւնոյն սկիհից ըմպում են հիւանդ և առողջ մարդիկ, վերջինները ենթարկւում են վարակման կարելիութեան։ Քանի-քանի ահաւոր հիւանդասաղմեր են լինում մարդուս շրթունքի վրայ, երբ նա իրան բոլորովին առողջ է համարում և գնում է հաղորդութեան...

Ամերիկացիք, որ լաւ գիտեն թէ միկրօրների հետ կատակ անել չի կարելի, դեռ չըսպասած Զւիցերիայի վերը յիշածս փորձերի հետեւանքին, վաղօրօք հոգ տարան 1904 թւին առանց

Եքկար ու բարակ ձևականութիւնների հարցը վրձուելու։ Նիւ-Եօրքի նահանգի բոլոր քահանաները ժողովւեցին և միասին խորհրդակցելուց յետոյ վճռեցին, որ ամեն հաղորդւող ի՞՛ փոքրիկ սրւակն ունենայ, որով և ստանայ հաղորդութեան իր բաժինը։

Այս այսպէս լինելուց յետոյ, միթէ հոգեւորականները պիտի զարմանան, երբ կրթւած մարդիկ խաչ կամ աւետարան շրթունքով չըհամբուրեն, այլ միայն երկրպագութիւն անեն, երբ տօն օրերին հարիւրաւոր մարդիկ մօտենում և իրանց պոչշների (շրթունքի) թացութիւնը թողնում են միենոյն օծեալ առարկայի վրայ համբոյրի միջոցով։

Այս այսպէս լինելուց յետոյ, միթէ կաթոլիկ քահանանիթը պիտի թոյլ տան «օրհնած ջրի» գործածութիւնը։ Սրանից 6—8 տարի առաջ մի խտալացի մանրէաբան Աբբա (Աննա) անունով կամեցաւ մանրադիտակով քննել, թէ ինչեր կրգըտնըւեն այդ օրհնած ջրի մէջ, ուր հարիւրաւոր ձեռքեր մտածելած էին։ Դոկտ. Աբբան ցոյց տւեց ամենքին, որ այդ ջրի մէջ գտնւում էին մի երկու հիւանդաբեր սաղմեր, կային և գանազան տեսակ ջրաբոյժներ, ինֆուզօրիաներ և այլն։ Այսպէս որ այդ օրհնած ջուրը դօկտ. Աբբան համահաւասար համարեց հոտած ջրհորի ջրին։

Մեր հայ կղերն էլ մի քանի տեղերում, մանաւանդ տաճկահայոց գիւղերում, սովորութիւն է դարձրել խաչլրայ կատարելու մի քանի

սուրբերի և խաչի տօնին։ Մի մեծ ամանի մէջ ջուր են լցնում, այդ ջրի մէջ խաչը մի քանի անգամ դնել-հանելուց յետոյ, հաւատացեալները սկսում են միենոյն գդալով այդ օրհնած ջրից խմել և ձեռքերով իրանց աչքերին քսել ի փըրկութիւն իրանց ցաւերի։ Թիֆլիսի մի քանի եկեղեցիներում օրհնած ջուր կայ դրւած մի ամանի մէջ, որը նարան է կոչւում, ունի մի ընդհանուր գդալ, որով խմում է և առողջը, և հիւանդ ժամանող ջական եկեղեցական կարգերի դէմ մեր եկեղեցու առաջնորդները միջոցներ չըպիտի ձեռք աւնեն և արգելեն այդ տեսակ շահագործումը ժողովրդական տգիտութեան։

Գ Լ Ո Ւ Խ ՎIII.

Ամուսնութեան շրջան։ Եկեղեցին ընդունում է ամուսնութեան հիմնաւոր պայման—սէրը եւ լիակատար առողջութիւնը։

Քրիստոնէական եկեղեցին ամուսնութիւնը իր հովանաւորութեան տակ առնելով՝ նախ հաստատեց, Յիսուսի պատէրի համաձայն, Միայրութիւնը և միակնութիւնը. սրանով մարդկային սեռական յարաբերութիւնների բարդ գործը քազմայրութեան, քազմակնութան և այլ խառնաշփոթ դրութիւններից բարձրացրեց մի նոր, աւելի մարդկավայել աստիճանի։ Սրանով կին մարդու հասարակական ստոր հարճային դիրքը տղամար-

դին հաւասար ընկերակցի, լծակցի գիրքի բարձրացաւ։ Սրանով հիմք դրւեց խակական ընտանիքի, քրիստոնէական գերդաստանի կազմակերպութեան և աւելի հաստատապէս ապահովւեց սերունդների բարեյաջող բարգաւաճումը։ Շատ բարոյաբանների կարծիքով, այս է քրիստոնէական կրօնի ամենամեծ առաւելութիւններից մէկը միւս կրօնների նկատմամբ։ այս է քրիստոնէական ազգերի աւելի բարձր քաղաքակրթութութեան հիմքերից մէկը։ Եկեղեցական հայրերը, քանի որ այնքան մեծ նշանակութիւն տվին ամուսնութեան նոր ձևին՝ դասելով նրան Եկեղեցու սուրբ խորհուրդների շարքը, ընականաբար պէտք է իրանք հոգային պառզելու և սրբագործելու քրիստոնէական նոր ընտանիքի հաստատութեան և բախտաւորութեան պայմանները։ Եւ այս պէտք է անէին ոչ միայն հոգեոր կամ բարոյական տեսակէտով, որովհետև ամուսնութեան գործում այդ երկու տեսակէտներն այնքան սերտ շղկապւում են, որ բաժան-բաժան նայելը և մէկը միւսից անկախ կարգադրելը անհեթեթութիւն պիտի լինէր, մանաւանդ հին ժամանակներում։ Այս կերպ, Եկեղեցու հայրերը քրիստոնէական վարդապետութեան վերացական, երկնային կեանքի ձգտման հետ կարողացան հաշտեցնել աշխարհային երջանկութեան գլխաւոր առանցքը—Սէրը, ընդունելով այս իրը գլխաւոր պայման ամուսնական հաստատութեան։ Նըրանք ամուսնացող երկու սեռի հասունութիւնը

և համերաշխ սէրը, լիակատար առողջութիւնը և առողջ սերնդի շարունակութիւնը դրին իրը ամենագլխաւոր հիմունքն ամուսնութեան։ Այս են և առողջաբանութեան պահանջները բախտաւոր ամուսնութեան համար։

Այս բոլորը Եկեղեցին սրբագործել է որոշեալ կարգերով։ Թող ներւի մեզ՝ ամենքին յայտնի այդ կարգերը կամ արարողութիւնները համառոտակի, բայց մի առ մի յիշել յատեղ, որպէս զի փաստօրէն ապացուցէի, թէ Եկեղեցական հայրերը վերը յիշածս պայմանները, յիրաւի, հաստատել են և քարոզել իրանց սահմանած աղօթքներով։ Եւ եթէ մեր կեանքի մէջ այդ պայմանները չեն իրագործւում կամ յեղաշրջւել են, դրա պատճառը եղել է մէկ կողմից՝ յետագայդարերի մեր ժողովրդի, մանաւանդ հոգեորական դասի, թանձրացած տղիտութիւնը, միւս կողմից՝ մեզ տիրապետող և մեզ շրջապատող ազգերի մեր բարգերի վրայ գործած ապականիչ ազգեցութիւնը։

Նախ Եկեղեցին սահմանել է նշանադրութեան կարգ, որով յարմարութիւն և հնարաւորութիւն պիտի տրւէր վեսացւին և հարմացւին իրար մօտիկ ճանաչելու, իրարու մտաւորական, բարոյական, առողջական և այլ հանգամանքներին ծանօթանալու։ Եւ սրանից յետոյ, եթէ նրանց մէջ շըծագի լիակատար սէր և համաձայնութիւն, նրանք կարող են նշանը վերաբարձնել և այդ կերպ վերջացնել իրանց յարագածնել և այդ կերպ վերջացնել իրանց յարա-

քերութիւնը։ Իսկ սիրոյ և համաձայնութեան դէպօւմ եկեղեցին, ինչպէս վերն ասի, սահմանել է «մինչ ցմահ պսակը», որը լուծելի է միայն ամուսիններից մէկի կամ՝ միւսի անհաւատարմութեան կամ պոռնկութեան առիթով^{*)}։ Պսակաղբութեան հանդէսը սկսելուց առաջ, քահանան նորապսակներին առանձին-առանձին պիտի խոստովանեցնի. — ահա ձեզ մի շատ նրբամիտ նախազգուշութիւն ևս, որի միտքը շատ քահանաներ լաւ չըմբռներով և կարծելով թէ միայն հաղորդութեան համար է ու բուն պսակի խորհրդի հետ կապ չունի՝ բարձի թողի են անում։

Հանդէսը սկսւում է նրանով, որ քահանան հարսի ձեռը տալիս է փեսային և ասում՝ «Աստւած զձեզ միտքան սիրով պահեսցէ»։ Այս խօսքերով եկեղեցին հաստատում է փոխադարձ սիրոյ կարեղութիւնը ամուսնութեան համար։

Պսակաղբութեան հանդիսի խրատներից ես կրբերեմ միայն մի քանի կտորներ փոքրիկ մեկ-

^{*)} Այժմեան առողջարանութեան և բարոյագիտութեան (զարգացած օրէսսդրութիւնների) տեսակետով, այդ միակ առիթը բաւական չէ. պէտք է ընդունակ գոնէ մի այլ առիթ ևս. այն է՝ ամուսնացածների մէկի կամ միւսի այնպիսի ծանր տկարութիւնը, «որ միանգամայն քանդում է ամուսնութեան բոլոր հիմքերը, ինչպէս օրինակ յարատե անրութելի հոգեկան հիւանդութիւնը, յարատե և ժառանգաբար փոխւող ախտերը».

Ժամանակի.

Նութիւններով և աշխարհիկ լեզով, որն ինձ թւում է թէ աւելի կենդանացնում է եկեղեցու քարոզած սկզբունքները. — «Ծղամարդիկ պիտի սիրեն իրանց կանանց, ինչպէս իրանց մարմինը։ Ով սիրում է իր կնոջը, միւնոյն է թէ իր անձն է սիրում»։ Ամուսնական սէրը դէպի ծնողներն ունեցած սիրուց էլ զօրեղ պիտի լինի և, եթէ բանն ընտրութեան գայ, «տղամարդը պիտի թողնի հօրն ու մօրը և կնոջ հետ երթայ»։ Եկեղեցական հայրերը, կամենալով աւելի ևս որոշել ամուսնութեան համար անհրաժեշտ սիրոյ աստիճանը, քարոզում են. «Ծղամարդիկ, սիրեցէք ձեր կանանց, ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը նրա համար մատնեց»։ Ուրեմն, տըղամարդու սէրը դէպի իր հարսնացուն և կինը մինչև անձնազոհութեան աստիճանը բարձրանալու ընդունակ պիտի լինի, որպէս զի պահանջի հարսից, ինչպէս Քրիստոս—եկեղեցուց՝ «որ սա չունենայ ոչ մի արատ, աղտեղութիւն և ուրիշ այդպիսի բաներ, այլ լինի սուրբ և անարատ»։

Գալով երկրորդ պայմանին—ամուսինների առողջութեան խնդիրն, ահա պսակի վերջնական աղօթքի խօսքերը.

«Դու, Տէ՛ր, սուրբ պահճը սրանց անկողինները, որպէս զի թշնամու որոգայթ չընկած՝ հոգով ու մարմնով առողջ մնան հրեշտակի պահանութիւնով»։ Արդ՝ «հոգով ու մարմնով առողջ զութիւն» կընշանակի լիակատար առողջութիւն,

որն և պահանջում է եկեղեցին ամուսնացողների համար:

Անցնելով ամուսնութեան վերջնական նրապատակին, ցեղի պաշտպանութեան խնդրին, ահա ինչ է ասում քահանան պսակի նարօտը վերցնելու ժամանակ. «Նայիր, Տէր, քու քաղցրութիւնով սրանց վրայ, ուղարկիր խաղաղութեան հրեշտակը, որ սրանց պահպանի սուրբ ու անարատ, միաշունչ ու միախորհուրդ: Քու կամքովդ տռար սըրանց զաւակներ, որ այս աշխարում ապրեն անգիծ ու անարատ վարքով մինչև խորին ծերութիւն»: Այս միթէ չի նշանակում, թէ ծնողները ժառանգաբար փոխւող արատներ էլ չըպիտի ունենան, որպէս զի չօժտեն նոյն հիւանդութիւնով իրանց զաւակներին և սրանց վաղաժամ մահան պատճառ չըդառնան: Արատաւոր ծնողները և նրանց արանդաւոր ժառանգները մինչև խորին ծերութիւն չեն կարող հասնել: Ուրեմն ժառանգական հիւանդութիւններով ամուսնացողը եկեղեցու դէմ էլ մեծ մեղք է գործում*):

Սերնդի առողջութեան խնդիրը եկեղեցու հայրերի աչքում այնքան մեծ նշանակութիւն է ունեցել, որ այսպիսի աղօթքներով միայն չեն բաւականացել, այլ կամեցել են աւելի խորը թափանցել և իրանց ժամանակի թէ բարոյական և

*) Տես Կ. Կոստանեանի պատմական հետազոտութիւնը՝ «Դաւիթ վարդապետ Ալա-կայ որդի», որ 12-րդ դարում գրել է եկեղեցական կանոններ («Աղգագրական Հանդէս», գիրք V, 1907 թ. եր. 125-127:)

թէ բնախօսական ընդհանուր փորձառութեամբ եկեղեցական իրաւասութիւնով արգելել են արենակիցների ամուսնութիւնը:

Նոյն նպատակով և միևնոյն ժամանակ գիտակցական սիրոյ գաղափարը և ամուսնական կեանքի անմիասութիւնն ապահովելու համար, արգելք սահմանեցին և մեղք համարեցին որոշ հասակից առաջ պսակումները:

Գլուխ Խ.

Հասի եւ շրջասութեան խնդիրը: Անչափահասների պսակի հարցը:

Այս կերպ առաջ եկան հասի, շրջասութան եւ անչափահաս պսակների խնդիրները, որոնք երկար և շատ հետաքրքրական պատմութիւն ունին և որոնք այնքան մեծ դեր են ունեցել և ունին քրիստոնէական եկեղեցու ժողովուրդների կեանքում: Իմ նպատակից դուքս է այստեղ այդ խճնդիրների մանրամասն քննութիւնը. իմ պարտքն է միայն ապացուցանել վերը զրածս բնարանը (թեման) այդ խնդիրների նկատմամբ էլ, այն է թէ՝ նախնի եկեղեցական հայրերը այստեղ էլ ղեկավարւել են ոչ միայն բարոյական (որ գըլխաւորն էր), այլ և առողջապահական տեսակետով (որ այժմ շատերը ուրանում են):

Անշուշտ, երբ քրիստոնէական եկեղեցին, ինչպէս և միւս կրօնները, մերձաւոր ազգականների ամուսնութիւնը մեղք հրատարակեց, դրա-

նով ստեղծւում էր մի զօրեղ հոգեբանական ներշնչումն հաւատացեալների համար, որով մարդկային կիրքը զսպւում էր և մարդս սովորում էր նայել իրան շրջապատող միւս սեռի ազգականների վրայ՝ ինչպէս, օրինակ, իր քրոջ, իր դստեր վրայ։ Այս բանը մեծ նշանակութիւն ունէր մանաւանդ նահապետական մեծ գերդաստաններով ապրող ազգերի համար, քանի որ դրանով պիտի պաշտպանւէր այդ ընտանքների բարքերի ու վարքերի մաքրութիւնը կամ անարատութիւնը։ Բայց չէ որ ըլհասութիւնը որոշ չափ ու սահման պիտի ունենար, Հէնց որ նախնի եկեղեցական հայրերը սկսեցին հասութեան կամ չըհասութեան աստիճանները պարել, նրանք հարկաւ պէտք է դիմէին անմիջապէս ընախօսական հանգամանքի, իրանց ժամանակի ժառանգականութեան համակացողութեան, այն է՝ արենակցութեան աստիճաններին։ Հնումը կարծում էին, թէ ժառանգականութիւնը կապւած է արեան հետ։ Այժմս էլ, երբ ժողովուրդն է ասում, թէ «այս ինչ երիտասարդի երակներում պապի արիւնը կայ», դրանով ուզում է ասել, թէ այդ նախնիքի որևէ արատը կամ որևէ առաքինութիւնը ժառանգաբար անցել է յետնորդին։ Հնումը տարածւած էր, իբր այն ժամանակայ գիտական հայեացք, թէ մի զոյտ ծնողներից արիւնը անցնում է որդոցը ամբողջովին, թոռներին—հազիւ կէսը (2 մաս), իսկ թոռան որդոցը—հազիւ մի մասը միայն և այստեղ նւազելով արե-

նակցութեան աստիճանը՝ ձագթոռնիկներում բոլորովին վերջանում է։ Սրա հետ միասին չըմուանանք, որ դարաւոր դիտողութիւններից հընումն էլ ընդհանուր կերպով յայտնի էր, որ մօտիկ ազգականների մէջ ամուսնութիւնը տալիս է թուլակազմ, վատառողջ սերունդ։ Հասկանալի է ուրեմն, որ նախնի հայրերն այս երկու հին աշխարհայեցողութեան ազգեցութեան տակ՝ չըհասութիւնը կապելով արենակցութեան (ժառանգականութեան) հետ, մէկի սահմանը միւսի սահմանին հասցնելով (6-դ պորտի), բնականաբար կամեցել են, բացի բարոյական օգուտը, արենախառնութեան ժառանգական վատ հետևանքն էլ անհետացնել ու մարդկային սերնդի վատասեռումի առաջն առնել։ Սակայն հովմէական եկեղեցու հայրերը, խաւար դարերում, ժողովրդին իրանց ձեռքն առնելու ձգտումով, իրանց շահի համար հաւատացեալների անհատական իրաւունքներն աւելի և աւելի սահմանափակել ուզելով, թողին նախնի եկեղեցու այդ հիմունքը (սխալ թէ ուզիդ—դամի որոշ սկզբունք էր), սկսեցին զօռ տալ չըհասութեան իբր բարոյական կողմին և կամայական հիմունքով չհասութեան աստիճանները հասցըին մինչեւ 14 պորտը (!), որ յետոյ եկեղեցական ժողովները հազիւ վերադարձրին 8-դի և 7-դի։ Սրան հետեւով մեր եկեղեցու միջնադարեան հայրերն էլ, բացի արենակցական 7 պորտ ընդունելի, համարեա նոյն չափի խնամմէ-

ական չհասութեան պորտեր հնարեցին, որ ոչ
մի բնական հիմք չունի այժմս.—կնքահայրա-
կան, որդեզքական և այլ այդ տեսակ աւելի բըռ-
նազրօսիկ ազգականութիւններ ստեղծեցին . . .
Քանի որ մեր եկեղեցին ժողովրդի ընտրութեամբ
կառավարող եկեղեցի է, անշարժ մեռելութեան
մատնած եկեղեցի չէ,—հաւանական է, որ այս
XX դարում մի եկեղեցական ժողովով կամ հայ-
րապետական հաւասարակշիռ խորհրդով այդ բո-
լոր աւելորդ, նախնի եկեղեցուն հակառակ բար-
դութիւնները պիտի վերացւին և նոյն իսկ ժա-
մանակակից բարոյական և գիտական ցուցում-
ներով կարգադրւի չհասութեան կարևոր խնդիրը:

Եթէ հիմա հետաքրքիր լինինք, թէ որն է
այժմեան գիտութեան կարծիքը չհասութեան
խնդրի մասին, պէտք է ասեմ, որ մօտիկ արե-
նակիցների ամուսնութեան ֆասակար ազգեցու-
թիւնը սերնդի վրայ ենթադրում է շատ մար-
դաբանների, ազգագիրների, բնախօս-բժիշկների
ցուցումներով: Այդ ֆասակարութիւնը բացարը-
ռում է արատների և հիւանդութիւնների ժա-
ռանգականութեան օրէնքով: դա ապացուցած է
ոչ այնքան մասնաւոր գէպքերի վրայ, երբ ա-
ռողջ ազգականներ իրար հետ պսակւել են, այլ
կզգիցած դասակարգերի, փոքրաթիւ կրօնական
համայնքների, առանձնացած սակաւթիւ ցեղե-
րի վրայ, երբ իւրաքանչիւրում դրանցից մեր-
ձաւոր ազգականներ բնականաբար իրար հետ
պէտք է ամուսնանային, և այսպէս շարունակւ-

լով՝ այդ առանձնացած համախմբումները ոչ
միայն վատասերւել են, նւազ, արատաւոր և ա-
պուշ սերունդներ արտադրելով, այլ և սերհատ-
ւել են, այսինքն ոչնչացել: Այժմեան տեսակէ-
տով, առողջապահօրէն ապրող ազգերի մէջ ա-
րենակցական չհասութեան աստիճանը 7-րդ պոր-
տից կարելի է անվտանգ իջեցնել 5-րդ պորտի:
Եւ որա համար ուրիշ վիճակագրական ապա-
ցոյցներ պտրելու հարկ չըկայ. բաւական է յի-
շենք անգլօ-սաքսոն ցեղերի քաջակազմութիւնը
և աշխարհ տիրող կորովը, չընայած որ սրանց
մէջ 5-րդ և երբեմն նոյն իսկ 4-րդ պորտի ամուս-
նութիւնները թոյլատրւած են և սովորական են:

Գալով անչափահամների պսակի արգելման
խնդրին, ասողներ եղան, թէ այս բանը միմիայն
մտաւորականի կամ հոգևորի հետ կապ ունի և
ոչ թէ առողջականի կամ բնախօսականի հետ,
այսինքն եկեղեցին որոշ տարիք հարցնելով կամ
պահանջելով ամուսնացողներից, ուզում է միայն
իմանալ, թէ որքան նրանք գիտակցութիւն ունին
սուրբ խորհուրդը հասկանալու: Այս առարկու-
թեան դէմ առ այժմ այսքանը կասեմ. եթէ այդպէս
է, եթէ բարոյականի կամ հոգևորի հետ եկեղեցին
իբր թէ պարտական չէ այդպիսի հարցի օրէնքա-
գրութեան մէջ և բնախօսականը մտածել, ապա
ինչու վերջին դարերի մեր հոգևոր հայրերը հարս-
նացւի առնւազի հասակը բերին 14-ի, 13-ի
տարիքի վրայ կանգնեցրին:—Որովհետեւ, կըպա-
տասխանեմ, —մեր կլիմայի տակ սովորական դաշ-

տանն այդ հասակում է երեսում: Սիսալմամբ հը-
ները կարծում էին, ինչպէս և այժմ մեր գիւ-
ղերում կարծում են, թէ դաշտանի երևալը սե-
ռական հասունութեան նշան է, այն ինչ բժշկա-
մարդաբանական հայեացքով՝ դաշտանի սկզբից
գէթ 2—3 տարի պիտի անցնի, որ ծննդաբերու-
թեան գործարանները լիովին կազմակերպեն և
հասնեն: Այս հարցում ուրեմն, իմ կարծիքով,
եկեղեցական հայրերը ոչ թէ պարտք չեն հա-
մարել միտ դարձնելու մարմնական հանգաման-
քին, այլ առաւել այդ կողմին են ուշը դարձրել,
քան մտաւորականին: Եւ, յիրաւի, նախնական
եկեղեցու քարոզած ամուսնական վսեմ դադա-
փարների ըմբռնումի և պսակի խորհուրդը գիւ-
տակցօրէն հասկանալու համար չէ որ աւելի
համապատասխան կրթինէր հարմնացւի 16—17
տարեկան հասակը, քան թէ 14—13 տարեկանի
երեխայական շրջանը, որ սիսալմամբ թոյլ է տը-
ւել մեր եկեղեցին: Այդ սիսալը նոյնպէս պէտք
է ուղղւի եկեղեցական ժողովով և ընդունւի
քաղաքներում՝ երիտասարդի հասակը առնւազը
22—23 տարի, աղջկանը 17—18 տարի, իսկ
գիւղերում՝ 18—20 տղի համար, աղջկայ հա-
մար 15—16 տարին առնւազը:

Գ Լ Ո Ւ Խ Տ Խ.

Ամուսնութեան շրջանի հակաքը իստոնէական կար-
գերը մեր այժմեան կեանքում:

Ամուսնութեան շրջան: Պսակագրութեան ա-

բարողութիւնների հետազօտութիւնից և ամուս-
նութեան վերաբերեալ արգելքների մեկնութիւնից
բաւականաչափ պարզւեց, թէ եկեղեցին պա-
հանջում է ամուսնացողներից ոչ միայն հոգեսոր
կամ մտաւոր հասունութիւն պսակի խորհուրդը
հասկանալու համար, այլ և ֆիզիկական հասու-
նութիւն՝ սէր զգալու համար, ինչպէս և անհա-
տական լիակատար առողջութիւն և ժառանգա-
կան անարատութիւն՝ ապագայ սերնդի քաջա-
ռողջութիւնը ապահովելու համար: Ուրեմն եկե-
ղեցու պաշտօնեաները, գլխաւորապէս քահա-
նաները, որոնց բերանով քարոզւում է այդ
սկզբունքը, պարտական են հոգելու իւրաքան-
չիւր ամուսնութեան գէպքում, որ հոգով կամ
մարմնով ոչ մի արատաւոր, ոչ մի յարատե ախ-
տաւոր պսակի խորհրդին չըմօտենայ: Նրանք այս
արգելքը պիտի գնեն նոյն իրաւունքով, ինչ իրա-
ւունքով որ սուրբ հաղորդութեան ժամանակ եկե-
ղեցու բեմից յայտնում են՝ «ոչ ոք թերահաւատ-
ներից, ոչ ոք ապաշխարողներից և ոչ ոք անմա-
րուրներից թող չըմօտենայ Աստւածային խորհը-
գիս»: Բայց ինչ ենք տեսնում մեր այժմեան
կեանքում.—կիսապուշը, ընկնաւորը, վերնոտը,
բորոտը, սիֆիլիսոտը, բարակացաւոտը, զինեմոլը
երբ կամենայ պսակւել՝ ամենենին արգելքի չի
հանդիպում քահանայի կողմից: Եւ քահանաների
այս զանցառութիւնն ուզում են արդարացնել
նրանով, թէ հիւանդութիւնները «մարմնական
հանգամանք են», բժշկի վերաբերեալ բան են և

ոչ թէ հոգեոր պաշտօնէի։ Այս իբր աստւածաւը ականական դատողութիւնով մեր այժմեան հոգեոր հայրերն իրանց ձեռով քանդում են եկեղեցու հիմքը։ Միթէ կարելի է ենթադրել, որ քահանան, ինչքան էլ տգէտ լինի, չիմանայ թէ յիշածս ախտերը փոխող կամ վարակիչ և կամ ժառանգաբար անցնող ախտեր են։ Մեր գիւղերում և քաղաքների ստորին դասերում, ուր բժշկի երես հազիւ են տեսնում, քահանաներն ամենից առաջ տեղեալ են լինում այս կամ այն ծխականի այդ տեսակ հիւանդութիւն ունենալուն։ Նրանք որ բժշկին վերաբերեալ մանրամասնութիւնները չիմանան, իրանց պարտքը չըպիտի համարեն խրատելու այդ տեսակ յարատե տկարներին յետ կենալ ամուսնութիւնից և իրանց իրաւունքը չըպիտի համարեն արգելելու այդպիսիների պսակը... Այս իրաւունքը եկեղեցին ի սկզբանէ տւած է իր պաշտօնեաներին։

Հիմի տեսնենք, թէ մեր կեանքի մէջ որքան իրագործւում է պսակի խորհրդի միւս ամենազլիւոր պայմանը, այն է՝ ազատ կամքով փոխադարձ մէջը։ Արդ՝ մեզանում այժմեան ժամանակ ամուսնութեան գործում ով է ոչը հարցնողը կամ պարողը... Մեր մի քանի նահանդների գիւղերում սովորաբար աղջիկներին են վաճառում այս կամ այն գնով, իսկ մեր մեծ քաղաքներում մեծ մասով տղէքն են իրանց ծախում այս կամ այն չափ դրամով։ Նոյն իսկ մեր կրթւած երիտասարդներից շատերը, մանաւանդ

վերջին ժամանակ, իրանց հարսնացւի ամենամեծ արժանաւորութիւնը նրա դրամական օժիտի կամ արտակարգ գեղեցկութեան մէջ են տեսնում, իսկ նրա անհատական և ժառանգական առողջական և հոգեկան արժանաւորութիւնները, կարելի է ասել, երկրորդական կամ յետին տեղն ունին նրանց աչքում։ Նոյն է կրթւած օրիորդների և սրանց ծնողների հայեացքը փեսացւի վրայ, որի նիւթական կարողութիւնն է միայն ինկատի առնըւում։ Այս կերպ ամուսնութիւնը մեզանում դարձել է մի տեսակ վաճառականական առետուր։ Եւ փոխանակ քրիստոնէական կամ «Պրախտի ընտանիք» կազմելու, մենք սկսել ենք բազմացնել մեր մէջ առետարական կամ ըսնի կենակցութիւններ։ Այս առետուրն աւելի տղեղ ձեւ է ստացել մեր այն գիւղերում, ուր բաշլողագին կամ պիսագին կոչւած թաթարական ադաթն է տարածւած։ Նայած թէ որ տղէն կամ նրա տունը որքան գլխագին է առաջարկում, աղջկայ հայրը ամեն ջանք թափում է աւելի շատ առաջարկողին տալ իր աղջիկը առանց սրա կամքի և սիրոյ, նոյնիսկ երբ աղջիկը դեռ անչափահաս է, 10—11 տարեկան երեխայ է։ Գլխագինը, իրեն գրգիռ աղջկայ ծնողների ազանութեան, ամենամեծ պատճառն է անչափահաս պսակների շատութեան, որ այնքան սռվորական է զարձել մեր գիւղերում և որի դէմ անդադար բողոքում է մեր մամուլը։ Հիմի հարցնենք՝ ինչի՞ մեր գիւղական քահանաները թոյլ են տալիս և չեն քաշւում օրհ-

Նելու այդ տեսակ հրէշային պսակները, որ դէմ
է թէ եկեղեցու և թէ բնութեան օրէնքներին.—
գիւղի կեանքը ճանաչողները մեզ պատասխա-
նում են. «որովհետեւ այդ պսակները աւելի չաղ
պատառ են ներկայացնում մեր քահանաների
համար»։ Այս փաստերի հիման վրայ մեր գիւ-
ղերի ամուսնութիւնների մեծ մասը կարելի է
համարել «բոնի պսակներ», որոնց դէմ բողո-
քում է ինքը գիւղական երիտասարդութիւնը
շատ տարածւած ժողովրդական երգովը. «...սի-
րածը սիրածին չեն տար, էս ինչ անիրաւ գեղ է»։
Արդ, ի՞նչպէս պէտք է մեր կեանքից վերանայ այս
անիրաւութիւնը, ովկ պիտի զսպի մեր քահանա-
ների զանցառութիւնները պսակագրութեան գոր-
ծում, ովկ պէտք է ժողովրդի աչքերը բանայ և
ցոյց տայ, թէ մի ժողովրդի վատասեռումը և
անկումը սկսում է հէնց այն ժամանակից, երբ
ամուսնաբնտրութեան գործում սէրը այլ ևս դեր
չի ունենալ։ Առաջնակարգ գերն այս ազատա-
րարութեան գործում պէտք է տրւի անջուշտ
ժողովրդի տնտեսական և մտաւոր զարգացմանը,
իսկական գիտութեան և կենսակրթական միջոց-
ների տարածմանը ժողովրդի մէջ։ Սակայն մեծ
դեր կարող են կատարել այս գործում և մեր
հոգեոր վարչական մարմինները և հոգեոր բարձր
իշխանութիւնը։ Սա կարող է կոնդակներով պատ-
շել թեմակալ առաջնորդներին և յաջորդներին՝
1) որ մաքառեն ամեն կերպ իրանց թեմերում
և գաւոններում զլխագնի սովորութեան դէմ,

ինչպէս այդ յաջող հետևանք ունեցաւ տարի-
ներ առաջ Ախալցխայի յաջորդի ջանքերով և
վեհափառ Հայրիկի օրհնութեան կոնդակով. 2)
որ պահանջեն գիւղական քահանաներից ճշու-
թեամբ ներկայացնել հոգեոր կառավարութիւն-
ներին ամուսնացողների մետրիքականները, որ-
պէս զի անչափահասի պսակ չըկարողանայ տեղի
ունենալ. 3) որ ցրւեն քահանաների մէջ բժըշ-
կական մասնաժողովով կազմած և հոգեոր իշխա-
նութիւնից վաւերացած հանրամատչելի մանրա-
մասն հրահանգներ այն բոլոր ախտերի մասին,
որոնց ունեցողներին ամուսնութեան մտնելն
արգելւած է. 4) որ ջատագովեն իրանց քարոզ-
ներում մեր նախնի բարքերը, որոնք բարեբախ-
տաբար դեռ տիրապետող են Հայաստանի մի
քանի գաւառների գիւղերում և մեր հայաբնակ
փոքր քաղաքներում, ուր փեսացւից զլիագին
պահանջելու սովորութիւն չըկայ, ուր հարսնացւի
օժիտի հետ զրամ տալը ոչ միայն սովորութիւն
չէ, այլ ամօթ իսկ համարում է, —առ հասա-
րակ գրամական ոչ մի հաշիւ տեղի չի ունե-
նում խնամէական կապեր սկսելիս, և աղջկայ
օժիտ համարում են նրա մտաւոր ու բարոյա-
կան յատկութիւնները, նրա հազուստեղէնը և
արդ ու զարդը։ Այստեղից է ահա տարածել
հայ ընտանիքի, հայ մայրերի բարի համբաւը,
այստեղից են դուրս գալիս մեր փոքր ի շատէ
առողջակազմ, տոկուն, կորովամիտ սերունդ-
ները...

Ահա այսպիսի կենսակրթական միջոցներով ամուսնութեան շըջանում և սրանց տոկուն և խիստ գործադրութիւնով միայն հոգեոր բարձր իշխանութիւնը կարող է բաւական նպաստել մեր ցեղի վատասեռման առաջն առնելուն, մեր լաւագոյն բարքերի պահպանութեան։ Այս միջոցների գործադրութիւնով մեր հոգեոր բարձր ատեանը (Սինօդը) գուրս եկած չի լինի եկեղեցու իրաւասութեան սահմանից և ոչ մի տարածայնութիւն չըպիտի առաջ բերէր, այլ անկասկած բոլոր մեր կուսակցութիւնների և բանիմաց ազգայինների միաբերան հաւանութիւնը և գործակցութիւնը պիտի վայելէր։

ԳԼՈՒԽ XI.

Ամուսնութեան շըջան։ Էջմիածնայ Սինօդի կանոնը ըժշկական վկայականի մասին։

Վերև նշանակածս ընդհանուր համակրական եղանակին կամ եկեղեցու իրաւական և աւանդական ձևին, դժբախտաբար, չի համապատասխանում էջմիածնայ Սինօդի այն կանոնագրութիւնը (ամուսնական շըջանին վերաբերեալ), որ հրատարակեց 1904 թ. նոյեմբերի 3-ին։ Ահա թէ ինչպէս է խմբագրւած այդ կանոնը. «Հրաման նորին կայսերական Մեծութեան և այն։ Լւան... Հրամայեցին. — Ի նկատի առնելով, որ շատ դէպքերում ամուսնացողները վարակւած վեներական ախտերով, վարակում են

ամուսնութիւնից յետոյ իրանց կենակիցներին, պատճառ դառնալով սրանց և իրանց զաւակների առողջութեան քայլայմանը և ընտանիքի անբախտութեանը և կործանմանը, յաճախ տեղիք տալով նաև ամուսնալուծութեան, ուստի Սինօդը պատիրում է թեմակալ առաջնորդներին անօրինութիւն անել՝ պահանջելու քաղաքաբնակ արդամարդկանցից, որ երբ ամուսնանալ ուղենան, դամարդկանցից, որ կամ ամուսնանալ ուղենան, բժշկի վկայական ներկայացնեն իրանց առողջութեան մասին*) և ապա պսակման հրաման տըրւի նրանց. իսկ գիւղաբնակ տղամարդկանցից պահանջել բժշկական վկայական, եթէ նրանք հընարաւորութիւն ունենան դրա համար։»

Այս կանոնն այնքան տարօրինակ է, որ հրատարակման օրից մինչև հիմա գրա շուրջ բազմաթիւ տարածայնութիւններ են ծագած մեր մամուլում թեր և գէմ, այնպէս որ կարճ միջոցում գրա առիթով, կարելի է սսել, մի փոքրիկ գրականութիւն կազմւեց... Սակայն մինչև օրս էլ վճռւած չէ՝ պիտի գործադրուի՞ նա մեր կեանքում մշտապէս, թէ ոչ։ Ահա այս հարցին կամենում եմ նւիրել այս գլուխը։

Կանոնի տարօրինակութիւնը, որ ապօք նում է թէ համակիրներին և թէ հակառակորդներին, նախ նրանումն է, թէ ինչի՞ միայն վեներին, նախ նրանումն է, թէ ինչի՞ միայն վեներական ախտն է նկատի առնւած, երբ համաներական ախտն է նկատի առնւած, երբ համա-

*) Այսինքն վեներական ախտից ազատ լինելու մասին։

նման ուրիշ յարատե վարակիչ ախտեր էլ կան, որ վեներական ախտից ոչ պակաս քայքայում են ընտանիքի և զաւակների առողջութիւնն ու բախտը... «Որովհետեւ,—պատասխանում են կանոնի ստեղծման նախածանօթները,—մեր երկու հոգեր հայրեր, գտնւելով հիւսիսային կովկասեան հանքայինքուժարանում, իրանց աչքով տեսել են և համոզւել, թէ որպիսի մեծ ծաւալումն է ստացած վեներական ախտը մեր ժողովրդի մէջ, նոյն իսկ կրթեալ կոչւած դասի մէջ։ Սարսափած այդ ախտի կորստարեր հետնանքներից՝ գնացել են և շտապել յիշած կանոնը հրատարակել տալու ո. Սինօդի միջոցով։ Արդ, եթէ նոյն հոգեսոր հայրերը վաղը պատահմամբ այցելեն օրինակ՝ մի մեծ բուժարան ալկօհոլիկների (գինեմոլների) և այստեղ էլ աչքով տեսնեն թէ ինչպիսի մեծ պատուհաս է հասարակութեան համար ալկօհոլիկմը և համոզւեն, որ դա ամենից շատ վատասեռում է մի ցեղ, — հետեղողաբար վարւելով՝ նրանք պիտի դուրս գան ու շտապեն դարձեալ մի կանոն հրատարակելու, որ բժշկական վկայական պահանջւի ամուսնացողներից թէ արբեցող չեն։ Այս կերպ թոքախտառների սանատօրիումներ յաճախելուց յետոյ՝ պիտի պահանջւի երրորդ վկայական, բորանցներ (լեպրազօրիա) տեսնելուց յետոյ — չորրորդ վկայական, ներւային հիւսնդների բուժարան տեսնելուց յետոյ — 5-րդ վկայական և այն։ Այսպէս իւրաքանչիւր հայ ամուսնացող տղամարդը աղնւազն 5—6 բժշկական վկայական պէտք է ներկայացնեն, երբ ընդունւի մեր Սինօդի ձեռվ կանոն հրատարակելու։

Կայական պէտք է ձեռք բերի, որ կարողանայ պսակւել... Ահա թէ ինչ տեղ է հասցնում շտապելով օրէնսդրութիւն խմբագրելը։

Տարօրինակ է թւում կանոնը մեր վիճարանողներին նրանով ևս, թէ ինչու միմիայն տղամարդկանց ախտն է նկատի առնւած, իսկ կանոնցը — ոչ. եթէ հարսնացուն պատահմամբ նոյն տեսակ ախտ ունենայ և այդ հանգամանքը յայտնի լինի քահանային, ուրեմն սա իրաւոնք չըպիտի ունենայ խրատելու և ետ կանգնեցնելու պսակից։ — Այդ կըլինի լիակատար անհեթեթութիւն... Իսկ եթէ բնականաբար արգելւելու է ախտացեալ կինարմատների ամուսնութիւնը, ապա ուրեմն կանայք էլ «ի մտանել յամուսնութիւն» առ նւազն 5—6 բժշկական վկայական պէտք է ներկայացնեն, երբ ընդունւի մեր Սինօդի ձեռվ կանոն հրատարակելու։

Տարօրինակ է այդ կանոնը առաւել ևս, որովհետեւ ինքն իր մէջ կրում է իր ոչնչացումը։ Այն գիւղականները, որոնք հնար չունենան բժըշկական վկայական ձեռք բերելու, ազատ են կանոնի պահանջից։ Կասկած չըկայ, որ մեր գիւղացիներն առհասարակ մեծ դժւարութիւն պիտի կը լին բժշկական վկայական ձեռք բերելու գործում, ուրեմն սովորաբար պիտի յայտնեն միշտ քահանային, թէ «հնարաւորութիւն չունեցան»։ Ասել է թէ հայ ժողովրդի ստար մեծամասնութիւնը ըլպիտի ենթարկւի կանոնին։ Եթէ հիմա ի նկատի առնենք, որ Պօլու

հախկին պատրիարք Օքմանեանը իր գրութիւնով
առ մեր ընդհանրական Հայրապետը բոլորովին
մերժում էր գործադրել Տաճկա-Հայաստանում Սի-
նօդի նոր կանոնը, քանի որ սա մեր եկեղեցա-
կան իրաւասութեան և կարգերի համեմատ չէ
նախապատրաստած, պարսկահայերն էլ, կաս-
կած չըկայ, չըպիտի կարողանան գործադրել այդ
տեսակ կանոնը, որովհետև ի՞նչ հաքիմիաշիներից
պիտի նրանք բժշկական վկայական ձեռք բե-
րեն... վերջ քանի, դուրս է գալիս, որ էջմիած-
նի ո. Սինօդի կանոնը մեր եկեղեցու մի շատ
չնչին մասին պիտի վերաբերի:

Այս ամենից յետոյ կանոնին համակրողներն
էլ ի՞նչ հիմունքով պահանջում են նրա ընդհա-
նուր գործադրութիւնը:—Ասում են՝ «չընայած
վերը յիշւած բոլոր թերութիւններին, կանոնը
անկասկած բարի նապատակով և բարի ցանկու-
թիւններով է սահմանւած, ուստի նա պիտի գոր-
ծադրելի»:—Այս քանին կարելի է կարճ պատաս-
խանել եւրոպական ասածով թէ՝ «Նոյն իսկ դժոխ-
քի ամբողջ գետինը բարի ցանկութիւններով է
սալայատակած», որ նշանակում է թէ՝ բաւական
չէ բարի ցանկութիւն ունենալը, ալէտք է իմա-
նալ նրան այնպէս գործադրել, որ բարիքի տեղ
վնաս չըբերի: Պէտք է ասել ի պատիւ կանոնը
պաշտպանող պարոնների, որ սրանք շատ հա-
մեստ նշանակութիւն են տալիս այդ կանոնին,
շեշտելով թէ իրանք այնքան միամիտ չեն, որ
կարծեն թէ եկեղեցական այս կարգադրութեամբ

դաժան սօցիալական չարիքի դէմ մի անխորտա-
կելի պատւար է կանգնեցրած...

ԳԼՈՒԽ XII.

Ամունացողներից ըժշկական վկայական
պահանջելու խնդիրը:

Նախընթաց գլխում պարզեց էջմիածնայ
Սինօդի 1904 թւի նոյեմբերի Յ-ի օրինադրու-
թեան անհեթեթութիւնը, օրէնքի հանգամանք
չունենալը և անգործադրելի լինելը: Բայց որպէս
զի խնդիրը բազմակողմանի քննած լինինք, հար-
կաւոր է մի հայեացք զցել իմանալու, թէ ի՞նչ
գրութեան մէջ է այդ հարցը քաղաքակրթւած
աշխարհում:

Այս խնդիրը եւրոպական բժիշկների կողմից
այնքան շատ է քննւած թեր և գէմ գրքերով, յօդ-
ւածներով և բժշկական ժողովների վիճաբանու-
թիւններով, որ այժմ մի մեծ գրականութիւն
կայ մեր առջև դիզւած, մանաւանդ վիներական
ախտի նկատմամբ: Ամբողջ հատորներ պիտի գը-
րէնք, եթէ կամենայինք մանրամասների մէջ
մտնել:—Այդպիսի նապատակ չունենալով, պիտի
ներկայացնեմ հայ ընթերցողին խնդրի համառօտ
պատմութիւնը՝ յիշելով միայն զանազան կար-
ծիքների պարագլուխներին:

Վերջին 10—15 տարիների ընթացքում մաս-
նաւոր բժիշկներ զեկուցանելով ժողովներում ի-
րանց պրաքտիքից վերին աստիճանի գոռացող,

- բողոքալի դեպքեր, իբր հետևանք անմաքուր ամուսնութեան, սկսեցին պահանջել, որ ամուսնացողները, որոնք յարատև վարակիչ հիւանդութիւն ունեցած են, ամուսնանալուց առաջ բըժժշկական քննութեան ենթարկվին։ Ամենից զօրաւոր արձագանք տւեց բժշկական աշխարհում դօկտ. Կազալիսի վերին աստիճանի շահեկան գիրքը՝ «Գիտութիւն և ամուսնութիւն» վերնագրով *), ուր բազմաթիւ հետաքրքրաշարժ փաստերի հիման վրայ, հեղինակը պահանջում է ոչ միայն բժշկական քննութեան կամաւոր ենթարկւելը ամուսնութիւնից առաջ, այլ և պարտադիր օրէնքսութիւնին կառավարութեան կողմից, որով արգելի պսակը ամեն ամուսնացողի, որ չի ներկայացրել բժշկական վկայական իր լիակատար առողջութեան մասին։ Այդ վկայականի մէջ պէտք է յիշել, որ ամուսնացողը գերծ է ամեն տեսակ փոխանցող և ժառանգական հիւանդութիւնից, մասնաւանդ վատ ցաւից։ Սրան հետևեց յաջորդ-տարում յայտնի պլրօֆեսօր Պինարի (Pignard) գեկուցումը ֆրանսիական բժշկական Ակադեմիային։ Այս հեղինակաւոր հաստատութիւնն էլ փոքրաթիւ մեծամասնութիւնով կարծիք յայտնեց ի նպաստ բժշկական վկայականի ամուսնացողներից։

Նոյն իսկ կրթւած հասարակութեան մէջ մեծ շարժում սկսւեց յօգուտ այդ հարցի դրա-

*) H. Cazalis, «La science et mariage». Paris. 1900.

կան որոշման։ Յայտնի վիպասաններ (Զօլա և այլն) և թատերագիրներ, ինչպէս Բրիե *) և այլն, սկսեցին ժողովրդականացնել դօկտ. Կազալիսի մըտքերը։ Անգլիայում բժշկական վկայականը ամուսնացողների համար մինչև անգամ երեսփոխանական ժողովի նիւթ դառաւ։ Զընայած այս ամենին, —ոչ ֆրանսիայում և ոչ մի քաղաքակիրթ երկրում բանը օրէնսդրութիւն սահմանելուն չըհասաւ ոչ աշխարհական և ոչ հոգեւոր իշխանութեան կողմից։

Ի՞նչ է այս բացասական հետևանքի պատճառը։

—Պատճառը մէկ չէ, այլ շատ պատճառներ կան, որ մեծ մասով բերւած են դատական բժշկականութեան ուսուցչապետ դօկտ. Մօրաշի յայտնի գրքում **): Պրօֆ. Մօրաշը նայել է ինդքին ոչ միայն բժշկական, այլ և իրաւաբանական տեսակէտով, խորհրդակցելով հեղինակաւոր իրաւաբանների հետ, որոնք աւելի մեծ դեր ունին օրէնսդրութիւն սահմանելու գործում։ —Մասնաւորելով հարցը վեներական ախտերի վրայ՝ թւենք թէ ինչ հերքող պատճառներ է բերում պրօֆ. Մօրաշը։

1) Այդպիսի օրէնքը ոչ միայն չըպիտի խանգարէ սիֆիլախտի տարածման և ժողովրդի վա-

*) Brieux, «Les avariés».

**) Morache, «La profession médicale, ses devoires, ses droits», Paris, 1901, հր. 233.—240.

տասեռման, այլ աւելի ևս պիտի նպաստէ այդ բաներին: Եթէ մէկը ամուսնութիւնից զրկուում է ոչ իր յօժար կամքով, այլ օրէնքի բոնի միջոցով, — այդպիսին պիտի շարունակէ վարակել աւելի շատ կանանց: Դրանով առանց այն էլ մեծ քաղաքներում բազմացած ապօրինի և վարակւած զաւակների թիւը աւելի շատ պիտի բազմանայ ի մեծ դժբախտութիւն ժողովրդի:

2) Եթէ փեսացւից վկայական պահանջւի, պէտք է հետևաբար պահանջւի և հարսնացւից, մանաւանդ այրի հարսնացւից: Այժմեան մեր բարքերին այդ բանը չի համապատասխանում: Ոչ մի գերդաստան չի թոյլ տալ իր աղջկան պսակից առաջ վեներաքննութեան ենթարկելու և այդ մասին պաշտօնական վկայութիւն տալու: Ուրեմն՝ օրէնքը անգործադրելի կը մնայ:

3) Գիւղերում շատ դժւար է և շատ անգամ անհնար այդ օրէնքը գործադրել:

4) Բայց ամենից գլխաւորն այն է, որ ամենահմուտ բժիշկները իրանց վրայ չեն ուզում առնել այդպիսի մի պատասխանատու գործ, ինչպէս վկայական տալը կամ չըտալը ամուսնութեան դէպքում, մանաւանդ սիֆիլախտի նկատմամբ: Այդ յարատե հիւանդութեան ընթացքում այնպիսի շրջաններ կան, երբ ոչ մի բժիշկ իրան դիմող անձի վարակւած լինելը չի կարող հաստատապէս ճանաչել: Բայց այդպիսի անձը պսակւելով կարող է վարակել իր կնոջը. Եթէ այդ շրմինի, կարող է վարակւած սերունդ առաջ բե-

րել. Եթէ այդ էլ չըլինի, կարելի է թէ փոքր ինչ հեռաւոր ապագայում այդ անձը ենթակայ լինի «մէջքուղեղային հիւծախտի կամ տարէսի (Tabes)և կամ «շարունակւող անդամալուծութեան» (paralysis progressive).

Պարիզի հոչակաւոր մասնագէտ Ալֆրէդ Ֆուլնիէն այդպիսի դէպքերի համար ահա թէ ինչ է ասում իր խորիմաստ և հմտալից գըրւածքում «Սիֆիլախտ և ամուսնութիւն»*). «Բայց կան սիֆիլախտի այնպիսի շրջաններ, երբ այդ հիւանդութիւնով բունւածը եթէ բժշկին դիմէ այդ շրջանում, մենք ստիպւած ենք նրան պատասխանել արդի մեր գիտութեան թերութեան պատճառով անորոշ կերպով — «այժմեան հանգամանքում անհնար է՝ մեզ մի որոշ բան յայտնել ձեր դրութեան մասին. կարելի է ձեր ամուսնանալը վտանգաւոր լինի, կարելի է թէ ոչ. ես հաստատ ու չինչ չեմ կարող ասել»:

Եթէ խստութեամբ գործադրով էջմիածնայ Սինօդի կարգադրութիւնը այդպիսի ոչ հազւագիւտ դէպքերում, երբ բժիշկը հրաժարւում է վկայական տալուց, ինչ դրութեան կը լինին փեսացուն, հարսնացուն, սրանց ծնողները և պսա-

A. Fournier, «Syphilis et mariage», II Ed. 1890, Paris, եր. 152—13. Հայ ընթերցողը կարող է ծանօթանալ Ֆուլնիէն հայեացքներին բժ. Վ. Արծրունու շատ կողմով յանձնարելի գրքոյկից «Ամուսնութիւն» վերնագրով:

կելու պատրաստ քահանան:—Անելանելի՛. դըռւ-
թիւն...

Քանի որ Ա. Ֆուրնիէի մասին է խօսքս,
այս էլ պէտք է աւելացնեմ թէ՛ չընայած որ այդ
գիրքը նւիրւած է ամբողջապէս սիֆիլախտի վը-
տանքները ամուսնութեան մէջ ցոյց տալուն և
այդ վտանգների առաջն առնելուն, հոչակաւոր
ախտաբանը ոչ մի տողով իր գրքում չէ յայտ-
նած, թէ բժշկական վկայականը կարող է համարւել
փրկարար միջոց:

Ես հետաքրքիր եղայ ծանօթանալու, թէ պրօֆ.
Ֆուրնիէն իր գրքի հրատարակումից յետոյ, որ
բաւական ժամանակ է անցել, մի այլ դէպքում,
իր միւս գրւածներում արդեօք համակրութիւն
չէ յայտնած բժշկական վկայականի օրէնսդրու-
թեամբ պահանջւելուն: Այս հարցով ես դիմեցի
պրօֆէսսօր Գօշէին (Gaucher), որ պրօֆ. Ֆուր-
նիէի ամբիոնի այժմեան բռնողն է իրեւ նրա
յաջորդը: Գօշէն ասաց, որ թէ Ֆուրնիէն և թէ
ինքը միշտ այդ խնդրին, երբ իրենց կարծիքը
հարցւել է, բացասական վճիռ են տւած, որով-
հետև այդպիսի օրէնսդրութիւնը չափազանց շատ
փափուկ կողմեր ունի և այդպիսի օրէնքի գոր-
ծադրութիւնը աւելի մշամներ կըբերի, քան օ-
գուտ:

Ահա այս է հեղինակաւոր մարդկանց եզրա-
կացութիւնը՝ թեր և դէմ կարծիքների մանրա-
մասն հետազոտութիւններից դուրս բերւած:

ԳԼՈՒԽ XLI.

(Շարունակութիւն)

Բժշկական վկայականի հարցը:

Եթէ դառնանք միւս հիւանդութիւններին,
որ արգելք են համարւում ամուսնութեան, դար-
ձեալ բժիշկը պիտի հանդիպի շատ փափուկ դէպ-
քերի, ուր թէ բժշկական գաղտնիքը պահելու
պարտքը և թէ մարդասիրութիւնը պիտի անելա-
նելի դրութեան մէջ դնեն նրան, եթէ բժշկական
վկայականը ամեն դէպքում խիստ կերպով պա-
հանջւի: Վեր առնենք այսպիսի դէպք: Մի սիրա-
հարւած զոյգ, որ կամենում է պսակւել: Օրիոր-
դի և երիտասարդի ծնողքը համաձայնութիւն
տւած են և պսակման օրը որոշւած է: Երիտա-
սարդը դիմում է բժշկին վկայականի համար:
Հարզ ու փորձի ժամանակ երիտասարդը յայտ-
նում է, որ մի քիչ մրսած է, փոքր ինչ հագում
է, որ վերջին ժամանակ կրկնւում է հազը, հիմի
էլ յոյս ունի, որ հազը շուտով կանցնի, ինքն իրան
հիւանդ չի համարում: Բժիշկը քննում է կուրծքը
և գտնում է, որ երիտասարդի մի թոքի վերեկ
մասը բռնւած է թոքախտի սկլիզոպվ, եթէ ան-
խնամ թողնւի, պիտի զարգանայ հիւանդութիւնը
ամուսնութեան ընթացքում աւելի արագ: Ի՞նչ
պիտի անէ այսպիսի դէպքում բժիշկը: Եթէ մեր-
ժէ վկայական տալը, պէտք է պատճառը յայտնէ
երիտասարդին, որով մահացու հարւած հասցրած
կըլինի նրան, քանի որ անսպասելի պիտի լինի

նրա համար այդպիսի մի բան: Վկայական չըտայ և պատճառը չըյայտնէ, բոլորովին անյարմար վարմունք կըլինի:

Եթէ վկայականի փոխարէն քարոզվի յօժարաբար դիմելու բժշկին ամուսնութեան ծանր քայլն անելուց առաջ,—այդ դէպքում բժիշկը շատ հնարներ կարող է գտնել, առանց ծանր հարսած հասցնելու երիտասարդին և հարսնացւին, ծնողների միջոցով երիտասարդի բժշկութեանը վաղաժամ հետևելու և նրա բժշկութիւնը ապահովելու, ինչպէս այդ բանի շատ օրինակներ կան:

Յիշենք այնպիսի մի դէպք ևս, ինչպէս գօկտ. Դէլպէշի (Delphèche) դէպքն էր, պրօֆ. Մօրաշի գրքից: Մի սիրահար երիտասարդ բևուերի հարսածով սպանեց՝ Դէլպէշին, կարծելով թէ վերջինիս յայտնած իրը սխալ կարծիքը իր հիւանդութեան համար՝ պատճառ էր իր ամուսնութեան յոյսի խորտակման:

Ում յայտնի չէ, թէ բժշկի յայտնած նոյն իսկ բերանացի կարծիքը մի հիւանդի տկարութեան բուն պատճառի մասին՝ ինչպիսի ծանր հետևանքներ է. ունեցած այդ հիւանդի ամբողջ ապագայի վրայ: Այս ամենը եթէ հիմնովին քըննենք, կրտեսնենք, որ այնպէս էլ փրկարար չի կարելի համարել զօրդեան հանգոյցը բժշկական վկայականի մի հարւածով լուծելը:

Վերը բերածս քննադատութիւններով ես չեմ ուզում ասել թէ էջմիածնայ Սինօդի կարգադրութիւնը մնասարեր է: Ընդհակառակը՝ նա օգ-

տակար եղաւ նրանով, որ նորից զարթեցրեց և արծարծեց ժողովրդի մէջ մի կարևոր հասարակական առողջաբանական հարց: Եւ, ըստ իս, դըրանով էլ վերջացաւ նրա դերը: Այժմ ահա չորս ու հինգ տարի անցած՝ համարեա թէ մոռացւած է այդ նոր եկեղեցական օրէնսդրութիւնը, և պսակները կատարւում են, սակաւ բացառութեամբ, առանց բժշկական վկայականի: Այդ չափով միայն պէտք է գնահատենք մեր Սինօդի կարգադրութիւնը, և ոչ թէ մի տեսակ հայկական շօվինիզմի զգացմունքով կոչում անենք բոլոր միւս ազգերի հոգևորականութեան՝ հետևել հայոց հոգևոր բարձր իշխանութեան օրինակին, որ իրը թէ գործադրած է վերջապէս փրկարար միջոցը *):

Այն ինչ՝ մեր բոլոր քննակատութիւններից պարզւեց, որ փրկարար միջոցը վկայական պահանջելը չէ, այլ ժողովրդի աչք բանալը, երիտասարդներին յիշեցնելը ինքնայօժար դիմելու բժշկի խորհրդին՝ ամուսնութիւնը վճռելուց առաջ, քահանաներին յիշեցնելու իրանց պարտքը՝ պսակելուց առաջ հարս ու փեսի առողջական հանգամանքին առանձին ուշք դարձնելու: Մենք վերը (X և XI գլխում) յիշեցնք, թէ որպիսի մեծ դեր կարող է կատարել հոգևոր իշխանութիւնը չարիքի առաջը իրօք առնելու համար: Պարզենք նորից այդ դերը՝ ի նկատի առած դրա կարեռութիւնը:

*) Прот. № 19 годичн. засъд. Имп. Кавк. Мед. Об-ва 27 апр. 1905 г.

Հոգեոր բարձը իշխանութիւնը պէտք է հրաւիրէ Թիֆլիսում կամ էջմիածնում հմուտ և հեղինակութիւն վայելող բժիշկների յանձնաժողով, որը պատրաստէ առողջապահիկ հրահանգներ պահկող քահանաների համար *):

Այս հրահանգները պէտք է վերաքննւին մէկ հմուտ իրաւաբանի և երկու հոգեորականի յանձնաժողովում։ Այնուհետև պիտի հաստատւեն ի գործադրութիւն բարձը հոգեոր իշխանութիւնից։ Թող այնուհետև հոգեոր իշխանութիւնը առաջնորդների միջոցով խիստ կերպով հսկէ այդ հրահանգների գործադրութեան վրայ, դրանց բովանդակութիւնը և նշանակութիւնը տարին մի քանի անգամ քարոզել տայ եկեղեցիներում։—Ահա այս միջոցով կարելի է տարածել ժողովրդի մէջ այն գիտակցութիւնը, որը միայն կարող է պաշտպանել նրան վատասեռումից։ Զըլէտք է մոռանանք, որ ոչ ոք ինքն իրան թշնամի չէ։ Հիւանդ դրութիւնով պասակողները այդ անում են տգիտութիւնով։ Հարիւրին հազիւ 2—3 հոգի պատահեն, որ գիտենալով իրանց տկարութիւնը և նրա հետևանքները ընտանիքում, այնուամենայնիւ վճռեն պատկել իրանց անձնական բաւականութեան համար...

Այսինքն՝ թէ որպիսի արտաքին երևոյթներով և որպիսի ներքին խոստովանութիւններով հարս ու փեսայի կողմից քահանան կարող է փոխւող հիւանդութեան վտանգը նախատեսել և առժամանակ արգելել պսակը, կամ դժւար դէպքում նախապէս բժշկի դիմելու խորհուրդ տալ՝ առանց վկայական պահանջելու։

Գ Լ Ո Ւ Խ IV.

Հոգետրականների կոակրօնութեան եւ քահանաների կրկնամուսնութեան խնդիրը։

Ամուսնութեան շրջանը աւարտելուց առաջ հարկ է մեզ շօշափել և հոգեորականների կուսակրօնութեան խնդիրը, որի հետ կապւած է մասսամբ քահանաների կրկնամուսնութեան արգելքը։ Այս արգելքը թէ ամուսնութեան և թէ կրկնամուսնութեան հոգեորների համար՝ ունի արդեօք մի որևէ առողջաբանական հիմք, թէ զուտ կրօնական տեսակէտով է սահմանւած։

Սկզբունքով չի կարելի ընդունել, թէ միայն կուսակրօնութիւնը բարոյական է, քանի որ եկեղեցին սրբագործել է պսակը՝ սուրբ խորհուրդների շարքը դասելով նրան։ Ինչ որ սուրբ է աշխարհականի համար, չի կարող անսուրբ դառնալ հոգեորի համար։

Տեսնենք ուրեմն ի՞նչ պատմական աւանդութիւններով է պայմանաւորւած յիշեալ արգելքը, առհասարակ կուսակրօնութիւնը։

Նոր կտակարանը ամուրիութիւն չէ գնում եկեղեցու պաշտօնեաների վրայ և նախկին քրիստոնէական եկեղեցին մինչև 7-րդ դարը ամուրիութիւն չէ պահանջած իր կղերից, այլ ընդհակառակը՝ ահա թէ ինչ է ասում Պօղոս առաքեալը *). «Պարտ է եպիսկոպոսի լինել միոյ կնոջ

*) Թուղթ առ Տիմոթէոս I, գլ. Գ.

այր... Որդեակս ունիցի...»։ Կարելի է մեր Մայր Մաշտոցից ապացուցանել, որ մեր եկեղեցու նախկին կարգերով ընդունելի է եպիսկոպոսների ամուսնացած լինելը։ Մի վիճակի առաջնորդը, ըստ Մաշտոցի, պէտք է նոյն վիճակի քահանաներից ընտրվի, հետևաբար ամուսնացած դրութիւնով։ Յետոյ, երբ կուսակրօն վանականութիւնը մեզանում էլ մուտ գործեց, Մաշտոցը վանականների վրայ խիստ անէծք է դնում, եթէ դրանք առաջնորդութեան կամ մի որևէ թաղի հովութեան ձգտեն։

Մայր Մաշտոցի մէջ այդ անէծքը հետևեալ կերպով է արտայայտւած։ «Վասնորոյ կանոնք է սուրբ հայրապետացն թէ կուսակրօնն քահանայ և առաջնորդ լիցի ժողովրդեան, անիծեալ է ինքն և ժողովուրդն՝ իւր»։

Հետաքրքրական է, թէ ի՞նչպէս և ի՞նչ պատճառներով այդ կանոնի հակառակն է կատարւում, մինչդեռ կանոնը մնում է անփոփոխ Մաշտոցում, որ մեր եկեղեցական կարգերի, կարելի է ասել թէ՝ օրինագիրքն է։

Յայտնի է թէ մինչև VII-րդ դարը քրիստոնէական եկեղեցու եպիսկոպոսները ամուսնացած էին լինում։

Թէպէտև Քաղկեդոնի ժողովից յետոյ (451թ.) հայերը դադարեցին պաշտօնապէս յարաբերութիւններ ունենալ յունաց եկեղեցու հետ, սակայն հայ եկեղեցականները շատ կարգեր փոխ էին առնում թէ յունական և թէ լատինական

օրինակով։ Եօթերորդ դարում յունաց մէջ Տրուլեան ժողովով (680թ.) եպիսկոպոսների համար պարտաւորիչ դարձաւ կուսակրօնութիւնը։ Թէև Տրուլեան ժողովը հայերիս համար ոչինչ կանոնական զօրութիւն չունէր, սակայն հայ եպիսկոպոսները, — չուղենալով վար մնալ իրանց դրացի յոյն եպիսկոպոսներից, որ իրը գերազանց անձնուրացութեան օրինակ էին ուղում ցոյց տալ կուսակրօնութեամբ, — իրանք յօժարակամ սկսեցին կուսակրօն կեանք վարել առանց վանական կամ անապատական լինելու, առանց մեր եկեղեցու նախկին կանոնը փոփոխութեան ենթարկելու։ Այս պատճառով էլ գեռ մինչև 10-րդ դարը, ինչպէս մեր եկեղեցական պատմութիւնից յայտնի է, մեր մէջ պատահում էին ինչպէս ամուրի մնացած, նոյնպէս և ամուսնացած եպիսկոպոսներ։ Ուրեմն՝ մեր եկեղեցու խկական կանոնին հակառակ առաջնորդի պարտաւորեալ կուսակրօնութիւնը նորմուծութիւն էր յոյների օրինակին հետևելով, որ յետոյ սովորութիւն դարձաւ իրեւ ընդունւած կարգ։ Երկրորդ պատճառը այդ սովորութեան արմատանալուն այն էր, որ միջին դարերում անապահով դրութիւնը և մտաւոր խաւարը պատելով հայ ժողովրդին՝ իրանց մէջ առան և քահանաներին։ Միմիայն վանքերը կամ անապատներն էին, որ պահում էին հայոց մէջ սուրբ գրոց գիտութիւնը։ Տգէտ և խաւար քահանաների միջից եպիսկոպոս ընտրելը գժւագացաւ, Ուստի արժանաւոր առաջնորդ կամ երացաւ։

պիսկոպոս ունենալու համար ստիպւած էին վանականներից ընտրել, որ գրագէտ լինէր և հինու ու նոր կտակարաններին ծանօթ:

Այսու ամենայնիւ դեռ այս Ներսէս Լամբրոնացին իր պատարագի մեկնութեան մէջ որոշ կերպով պախարակում է այդ զեղծումը, որ 12-րդ դարում արմատանում էր յօդուտ կուսակրօնների գանազան եկեղեցական պաշտօնավարութեան: «Կուսակրօնութիւնը, ըստ Ն. Լամբրոնացու, մասնաւոր կոչումն է, որ մի անհատ կրօգայ, կուրանայ աշխարհ և մեռելութեան ձեռ (սքեմն ու վեղարը) իր վրայ առնելով՝ ամեն տեսակ աստիճաններից կը հրաժարի»: Այս մտքով վանականութիւնը ճիշտ հակառակն է եկեղեցական աստիճանանաւորութեան (ասրկաւագութեան, քահանայութեան, Եեպիսկոպոսութեան կամ առաջնորդութեան) և այդ երկու հակառակ բաները իրար խառնելը Ն. Լամբրոնացին համարում է անընդունելի:

Տարակոյս չըկայ, որ Քրիստոսի պատւէլների մէջ կուսութիւնը ջատագովւում էր, բայց և միակին ամուսնութիւնը Յիսուսը խոտելի չը համարեց. իսկ առաքեալների խօսքերով՝ «պատւական է ամուսնութիւն և սուրբ են անկողինք նոցա»: Ամենից խստակրօն Պօղոս առաքեալը ահա թէ ինչ է ասում այդ խնդրի մասին. «Իւրաքանչիւր ոք զիւր շնորհս ունի. ոմն այսպէս, ոմն այնպէս»: Այսինքն՝ մէկը կարող է կուսութեան, ամուրիութեան շնորհք ունենալ, միւսը—ամուս-

նութեան: Մինչդեռ ամուրիների և այրիների համար նոյն առաքեալը ասում է. «Հա. Է նոցա թէ կայցեն իբրև գՔրիստոս»: «Ապա թէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնացին. զի լաւ է ամուսնալ, քան զջեռնուու»:

Իսկ Յիսուս Քրիստոսի իր խօսքերը այդ հարցը պարզում են ամենակատարեալ կերպով *:
Երբ աշակերտները նրան հարցը ինչ պէտք է ամուսնանալ, թէ լաւ է չամուսնանալ, պատասխանեց՝

«Ո՛չ ամենեքեան բաւական են այդմ բանի, այլ որոց տւեալ է. զի են ներքինիք որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս. և են ներքինիք, որ ի մարդկանէ եղեն ներքինիք, և են ներքինիք, որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից: Որ կարող է տանել, տարցին»:

Սրանից աւելի պարզ և աւելի ճշմարիտ առողջաբանական, միևնոյն ժամանակ աւելի բարձր բարոյական հայեացք չի կարելի յայտնել այդ հարցի մասին: Սա ուղղակի Քրիստոսաւանդ օրէնք է:

Այս Փրկչական և առաքելական տեսակէտով ինքն ըստ ինքեան լուծւում է նախ այրի բահանաների կրկնամուսնութեան խնդրիը. ոչ մի արդարացուցիչ հանգամանք չենք տեսնում այն արգելքի համար, որ չըգիտեմ որ ժամանակից մեր եկեղեցու

*) Մատթէոս աւետ. գլ. ժթ. 9—13:

կանոնների մէջ մուտք գործեց անտեղի կերպով։ Այս խնդրին մանրամասն ծանօթանալ ցանկացողը թող կարդայ «Հայ եկեղեցի» Պօլոյ ամսաթերթի 1901 թւի լուրջ յօդւածները «Այրի քահանաների կրկնամուսնութիւնը» վերտառութիւնով, նաև Պարիզի հայ եկեղեցու հոգեոր հովիւ Վոամշապուհ աւագ քահանայ Քիպարեանի սըրտաշարժ դիտողութիւնները այդ յօդւածների առիթով։ Նաև հայր Մ. Մելեանի գրքոյկը «Քահանայական խնդրի շուրջը», Թիֆլ. 1901 թ. և Մուշեղ եպիսկոպոս Սերոբեանի գրւածները։ Այս յօդւածների և վերը բերածս դիտողութիւնների հիման վրայ ժամանակը հասած է երեսում, որ Սրբագնագոյն Հայրապետը էջմիածնում եկեղեցական ժողով կազմելով ի շարս այլ ժամանակակից բարեփոխութիւնների, վերաբննութեան ենթարկէ քահանաների և կուսակրօնների դերը մեր եկեղեցում և քահանաների կրկնամուսնութեան արգելքը վերացնելու հոգ տանի։

Եթէ ցանկալի համարւի վերադառնալ մեր եկեղեցու ինքնուրոյն նախկին աւանդական կարգերին, քահանաների միջից պիտի ընտրեն առաջնորդ, յաջորդ, գործակալներ, նոյն իսկ սինոդականներ, իրեւ վարչական մարմնի անդամներ։ Իսկ կուսակրօնութիւնը վանականութեան հետ կապւած պիտի լինի, ինչպէս ի սկզբանէ եղած է, իրեւ եղբայրութիւն կամ միաբանութիւն բարձր հոգեոր կոչումով վարդապետների, որոնք ոչ մի վարչական պաշտօնների և բարձր աստիճանների

չըպիտի ձգտեն, այլ պիտի քաշւեն իրանց վանքերը և կատարեալ հաւասարութեամբ ապրեն իրանց վանահօր հրամանի տակ։ Սրանց գործն է լինելու՝ գրականութիւն, պատմութիւն, աստւածաբանութիւն և եկեղեցական արւեստ մշակելը, վանքական միջնակարգ և բարձր դպրոցներում ուսուցանելը այնպէս, ինչպէս Մխիթարեան միաբանութիւններն են, այն գանազանութեամբ, որ մեր վարդապետները վարչական գործերի, ժողովրդի մէջ պաշտօն վարելու չըպիտի ուղարկւին, քանի որ մենք զրա համար ունինք ամուսնացած քահանայութիւն։ Մեր վանականների եղբայրական կենցաղավարութեան հիմն է երրեակ ուխտը, որ Մաշտոցում բերւած է։

«Կատարեալ հնագանդութիւն, կամաւոր աղքատութիւն և կրօնական ողջախոհութիւն, ուրանալ զանձն և զյօժարութիւն կամաց իւրոց և կալի կարգի սահմանաց հարցն սրբոց ընդ հրամանաւ մինչ ցվախճան կենաց»։ Այս ուխտը մի փոփոխութեան միայն կարօտ է Փրկչական և առաքելական պատէրին և ժամանակի ոգուն համապատասխան լինելու համար։ այն է թէ պէտք է վերացւին «մինչ ցվախճան կենաց» խօսքերը և փոխարինւին «ցորչափ կարողն է տանել» խօսքերովս, այսինքն՝ իրաւունք տալով վարդապետներին այս կամ այն ժամանակամիջոց ուխտին ծառայելուց յետոյ, եթէ կամենան ժողովրդի մէջ գործելու, անցնեն քահանայութեան

շարքը և ամուսնանալ կարողանան առանց ուխտադրութ համարելու:

Մեզ թւում է, թէ այս կերպ միայն կարելի է ազնւացնել մեր եկեղեցականութիւնը, բարձրացնելով սարկաւագութեան և քահանայութեան վերին աստիճանի անկեալ և ստորացած վիճակը, մաքրելով կուսակրօնութեան չարիքները։ Ով որ մեր ժողովրդի մէջ ապրած է, գիտէ թէ՝ նրա մէջ սովորական դարձած բոլոր բամբառակները, որ զւարճութեան ըոպէներին պատմւում են, մեծ մասամբ կուսակրօնների կենցաղավարութիւնից առնւած խայտառակ դէպքերն են վերին աստիճանի ծիծաղաշարժ և միեւնոյն ժամանակ միանդամայն խորտակող ժողովրդի հաւատը դէպի կուսակրօն վարդապետները։

Պ Լ Ա Խ Խ Ս Վ.

Մահան շրջան։ Մահան իսկական նշանը։ Ուրականների հարցը։ Կիսամեռ քնածների թաղումն։
Դրա առաջն առնելու միջոցներ։

Մարդկային կենցաղի ծննդեան և ամուսնութեան շրջանների եկեղեցական առողջաբանական հարցերը փոքր ի շատէ շօշափելուց յետոյ, անցնենք այժմ եկեղեցու մասնակցութեանը մարդուս մահւան շրջանին։

Յայտնի հոգեոր կարգերով ննջեցեալը իր բնակարանից յուղարկաւորւում է եկեղեցի և ապա այստեղից դէպի գերեզմանատուն։ Պէտք է

ուրեմն մի առ մի հետազօտել, թէ որպիսի առողջապահական հարցեր են ծագում այդ ժամանակամիջոցում և այդ կարգերը կատարելիս։

Առաջին և գլխաւոր հարցն է, թէ ննջեցեալ համարւածը յիրաւի մեռած է, և ոչ թէ որևէ հիւանդական խոր նիրհումով անզգայացած։

Արևմտեան երկրներում, ինչպէս և Ռուսաստանում այս հարցը վճռում է բժշկական վկայականով, որ սահմանւած է օրէնքով՝ առհասարակ մահը և սրա պատճառները ստուգելու։ Առանց տնային կամ թաղական բժշկի վկայութեան մի անհատի մահւան մասին, ննջեցեալին հողին յանձնելը անթոյլատրելի է։ Իսկ այն տեղերում, ուր բժիշկ չըկայ, ինչպէս օրինակ շատ գիւղերում, հարկաւ այդ հարցի վճիռը մնում է քահանային։ Ուստի ամեն քահանայ, ուրեմն և գիւղական քահանան, պարտ է իմանալու այն նշանը, որով կարելի է հաստատել անհատի մահը։

Գիւնականները առաջարկել են զանազան այդ տեսակ նշաններ, որոնց մասին աւելորդ կրկինի այստեղ երկարելը, քանի որ այդ նշանները խարուսիկ կարող են լինել։ Ըստհանուր ախտաբանութիւնը մահւան միակ հաստատ նշան համարում է ննջեցեալի մարմնի նեխման սկիզբը։

Նեխումի կամ փառումի էն սկիզբը երևում է դիակի փորի մորթի վրայ, երբ սա սկսում է կողքերից փոքր ինչ կապատել։ Սովորաբար այդ գոյնը նկատելի է դառնում մահւան երկրորդ օրը՝ տաք եղանակին, իսկ երրորդ օրը՝ ցուրտ ժա-

մանակ։ Այս հիման վրայ կասկածելի դէպքում քահանան թաղման վճիռ չըպիտի կայացնէ, մինչև որ դիակի նեխման նշանը չերեայ։

Ի՞նչ հարկ կայ այս բոլոր զգուշութիւններին։

Ահա թէ ինչ։—Կան այն տեսակ հիւանդութիւններ, որ մարդուս ենթարկում են լէթարգի (lethargia) կոչւած քնի. երբեմն այդ տեսակ խոր քնի մէջ ընկածը միանգամայն մեռելի արտաքին տեսք ունի, բոլորովին անշարժ է և նոյն իսկ շնչառութիւնը այնքան կամացուկ և գանգաղ է, որ բժիշկներն իսկ սխալել են՝ յայտարարելով այդպիսի քնածին մեռած։ հետևաբար այդպիսին դեռ կենդանի թաղւել է։

Բժշկական տարեգրութեանց մէջ հարիւրաւոր դէպքերի նկարագրութիւններ կան, երբ լէթարգիական գրութեամբ դագաղ դրւածը զարթել է կամ եկեղեցում և կամ, որ աւելի սարսափելին է, զարթել է գերեզմանում հողի տակ։ Այս վերջին տեսակ դէպքերը իմացւել են, անշուշտ, պատհաբար, երբ որևէ պատճառով հարկ է եղել գերեզմանը բանալու և մեռած համարւածին դագաղում շուռ եկած (շարժւած) են գըտել, օրինակ՝ փորի վրայ դարձած և կամ ձեռներն ու զլուխը դագաղից դուրս։ Հարկաւ այդ դէպքերում կիսամեռը նախ զարթել է և, աներեսակայելի ճիգեր թափելով իր զըռութիւնից ազաւելու, կատարելապէս վախճանւել է հողի տակ…

Հաւանական է, թէ այդ կիսամեռների զարթելու դէպքերն են առիթ տւած հնումը և միջին

դարերի խաւար ժամանակներում, ինչպէս և այժմեան ժողովուրդների տգէտ զասերում, ուրւականների (խոռվազների) գոյութեան առասպելին։ Իբրև թէ մեռելները գիշերւայ ժամերին գերեզմաններից դուրս են գալիս, ման են գալիս գերեզմանատան շուրջը և առաւօտեան դէմ նորից մտնում են գերեզմանները. այս պատճառով սնահաւատ, նախապաշտած մարդիկ գիշերները գերեզմանոցի մօտից առանց մեծ սարսափների չեն կարող անցնել։ Մարդկային բանաստեղծական երևակայութիւնը երազներից էլ պատկերներ փոխ առնելով՝ այդ ուրւականներին ընդունակ է դարձրել գերեզմաններից իրանց բնակվայրը այցելելու, իւրայիններին այլ և այլ պատւէրներ, պատգամներ և մեծ զաղտնիքներ յայտնելու։ Այդ առասպելներին հաւատացողը կամ մի խումբ հաւատացեալներ միասին, եթէ հիւանդութեամ վառ երևակայութեամբ բորբոքւած են, կարող են իրանց ուղեղի մէջ այդպիսի ուրւականի տեսիլ ստանալ, որ գիտութեան մէջ հայլիցինացիա (hallucinatio) է կոչւում, բայց այդ չի նշանակում թէ այդպիսի տեսիլները իրօք գոյութիւն ունին արտաքին աշխարհում։

Իրականը այս տեսակ առասպելների մէջ այն է, թէ հազարաւոր մեռելներից հազիւ պատահի մէկը, երկուսը, որ կիսամեռ զըռութիւնով սխալմամբ թաղւած, գերեզմանում զարթնած լինի. Եթէ գերեզմանը շատ խորը չէ փորւած, հողածածկը շատ հաստ չէ, ինչպէս այդ մահմեղա-

կանների գերեզմաններն են, օրինակ՝ Պարսկաստանում *), — հաւանական է թէ զարթնածը կարողանար հողաշերտը դէն շպրտել և դուրս դար գերեզմանից: Եւ բնական է, որ այդպիսին, առանց այն էլ հիւանդ, այդ ճիգերից և իր անօրինակ զրութիւնից սարսափահար, սովորաբար գերեզմանի կողքին դուրսը վերջնականապէս վախճանւած վայր ընկած գտնւի: Այս է պատճառը, որ ուրւականների գոյութեան հաւատը մահմեդականների մէջ այնքան խոր արմատացած է:

Այս դէպքերի կրկնութիւնը անկարելի անելու համար, քաղաքակիրթ երկիրներում, ինչպէս օրինակ՝ հիւսիսային Գերմանիայում, ընդունւած է մատուռ կառուցանել ամեն գերեզմանոցում. Եկեղեցում համառօտ հոգեոր կարգ կատարելուց յետոյ, տանում են ննջեցեալին այդ մատուռում պահելու, մինչև որ երկրորդ կամ երրորդ օրը երեան դիակի նեխման առաջին նշանները: Մատուռի կողքին շինւած է պահապանի բնակարանը, որի պատից կախւած է բաւական ուժեղ

*) Պարսիկները իրանց մեռելներին թաղում են հազիւ 3/4 մեթր խորութիւնով և այնպէս ծածկում են, որ դիւրին լինի մի ժամանակից յետոյ հանել մեռածի ոսկրներ և տանել Քէլբալայ, Մեքքա և Մեղինա թաղելու: Ինձ պատահել է աեսնել մի քանի անգամ հարիւրաւոր ուխտաւորներ Քիրմանշահի մօտից անցնելիս դէպի Բաղդադ՝ իրանց ձիերի և ջորիների վրայ բարձած հակերով, որ պարունակում էին մեռելների ոսկըրները:

ձայն ունեցող զանգակ. սրա լեզւակից կապած պարանի ծայրը բերում են փաթաթում ննջեցեալի ձեռին, որպէս զի սրա շարժման դէպքում զանգակը ձայն տայ և պահապանը անմիջապէս օգնութեան համեմ հանգուցեալ համարւածին:

Գուցէ նոյն այս հանգամանքը բնազդաբար առաջացրել է սովորութիւն մեր մէջ, ինչպէս և ուրիշ քրիստոնեայ ժողովուրդների մէջ, ննջեցեալի վրայ մի օր հոգեոր կարգ կատարել տանը և մի երկու օր էլ եկեղեցում՝ այս կամ այն հանդիսաւոր պաշտամունքի առիթներով:

Սակայն առողջաբանական տեսակէտով անշուշտ նախադասելի է պահել ննջեցեալին գերեզմանոցի մատուռում, ուր ոչ ոք չի յաճախում, քան թէ եկեղեցում, ուր բազմաթիւ ժողովուրդ է լինում: Յիրաւի, յայտնի է, որ մարդկանց մեծ մասը (90%) մեռնում է ոչ թէ բնական մահով, այլ այս կամ այն տարափոխիկ (վարակիչ) հիւանդութիւնից: Իսկ վարակիչ հիւանդութիւնները, ըստ այժմեան տեսութեան, առաջանում են հիւանդաբեր մանրէներից (միկրօբներից): Սըրանք ևս առաւել զարգանում են հիւանդի մահւանից յետոյ նրա դիակացած մարմնում և աւելի մեծ տարածականութիւն ստանում, որից կարող է վնասւել աղօթելու եկող բազմութիւնը:

Եկեղեցին սլատի զգուշանայ դիակի միջոցով տարափոխիլ ախտեր տարածելով:

Ահա այս ընդհանուր վարակումի առաջն առնելու հոգացողութիւնն է կազմում այս շրջանի եկեղեցական առողջաբանութեան միւս մեծ հարցը կամ երկրորդ նիւթը:

Խաւար ժամանակների եկեղեցական վարիչների մէջ այն սխալ կարծիքն էր տիրապետում, ինչպէս գրւածքիս նախընթաց մի քանի գլուխներում էլ պարզւեց, թէ հիւանդաբեր վարակումը, իբրև մի անտեսանելի չար զօրութիւն, սուզք և օծւած տեղում մուտք չի կարող գործել: Այն ինչ՝ իրականութիւնը անթիւ փորձերով մեզ կարող է համոզել, որ այդ կարծիքը արդիւնք է իր ժամանակի անդիտութեան: Այժմեան եկեղեցական վարիչները այլ ևս չեն կարող ուրանալ արդի գիտութեան ափաշկարայ փաստերը՝ մակարոյժների (պարագիտների) և մանրէների (միկրօբների) դերի մասին տարափոխիկ հիւանդութիւններ տեղամարակներ (endemic) և համանալակներ (epidemia) տարածելու: Քանի որ այդ մակարոյժ-միկրօբները այժմ տեսնւած, շօշափւած, քննւած մարմիններ են, դրանցից անկասկած կարող է առաջ գալ վարակում հետևեալ հանգամանքների մէջ, որ տեղի ունին մեր այժմեան կարգերով.

1) Ննջեցեալին մաքրելու, լւանալու համար

կանչում են ժամկոչին այն եկեղեցու, որի ծուխն է հանգուցեալը: Ժամկոչը բնականաբար ջոկել չի կարող անվարակ դիակից վարակիչը: Վերջինին լողացնելուց յետոյ էլ նա առանց ախտահանելու հականեխուկ մի լուծւածով գէթ իր ձեռները, երբ հոգեսոր կարգը վերջանում է, հանգիստ սրտով դարսում է քահանաների շուրջառները, դամբրների շապիկները, խաչ, աւետարան և այն մի «բօխչայում» և բերում է եկեղեցի... Մեղքը անշուշտ ժամկոչնը չէ, քանի որ նրան ոչ ոք այդպիսի լուծւածք չէ տւել և չէ պատվիրել ձեռները նրանով մաքրելու (ախտահանելու) մինչև «բօխչան» դարսելը *):

2) Ննջեցեալի երեսին զայ են գցում, որ երեսկալ է կոչւում: Գիւղերում և փոքր քայաքներում այդ զայը տանու քահանային է պատկանելու: Իսկ մեծ քաղաքներում զայի համար մեծ և թանկագին կտորներ իբրև շուրջառացու նւիրելով, այդ կտորները եկեղեցու մեջ փականութիւն են դառնում հոգեսոր իշխանութեան կարգադրութիւնով: Երեսփոխները այդ

*) Իսկապէս ամեն մի բանիմաց տանու քահանայ պէտք է պատվիրէ ժամկոչին դիակը, մանաւանդ վարակիչ հիւանդութիւնից մահացածին, տաք ջրով մաքրելուց և հականեխական սապոնով (որ ծախւում է ամեն դեղատնում) լւալուց յետոյ, դիակը սրբել նաև երկրօրուկի սնդիկի (սուլեմայի) լուծաջրով, որով ժամակոչն էլ բնականաբար կըլաւանայ իր ձեռքերը, մորուաը և (կարճ կտրած) մազերը: Ծան. հեղ.

կտորներից, փոխանակ շուրջառի, երբեմն զառեր են պատրաստում և վարձու են տալիս այս և այն նոր ննջեցեալի համար: Այսպէս զառը շըրջում է մի մեռելից, միւսին՝ առանց ախտահանութեան ոչ մի դէպքում: Եթէ օրինակ դիֆտերիալից, քութէշից, ծաղկից, ժանտախտից և այլ այս տեսակ հիւանդութիւնից վախճանածի վըրայից է վերցում և տանւում բերւում այդ զառը, միթէ դա չէ վարակելու դպիրների շապիկները, քահանաների շուրջառները և այդ կերպ ծանր վարակումը եկեղեցուց քանի՛ քանի՛ ընտանիքների հաղորդելու:

3) Նոյն բանը կարելի է ասել այն սպիտակ սաւանի մասին, որ զառի տակ ձգում են և որ անմիջապէս ծածկում է դիակը, այն քաթանների մասին, որ դագաղի օղակներից անց են կացնում դիւրութեամբ դագաղը ուսերի վրայ տանելու: Այդ սաւանը և այդ քաթաններն էլ մեր ողորմելի քահանաները թաղումից յետոյ իրանց տուն են բերել տալիս, ինչպէս ննջեցեալի միւս կողոպուտը (անկողին և հագուստեղէն*), առանց մտածելու թէ դրանց միջոցով երբեմն

*) «Կողոպուտ» վերցնելու սովորութիւնը իրն ապրուստի միջոց՝ քահանաների համար ամենաստոր ձևն է մի որևէ դասի ապահովութեան համար, որովհետև օրէնքով պէտք էր արգելել վարակիչ հիւանդութիւնից վախճանածի անկողինը, սպիտակեղէնն ու հագուստեղէնը նոյն իսկ յետին մուրացիկ աղքատներին նւիրելը...

ծան. հեղ.

որպիսի սոսկալի հիւանդութիւններ կարող են տարածել իրանց գերդաստանում և հարեան շըրջաններում...

Այս ամեն պատահարների դէմ լուսամիտ և հոգատար առաջնորդների կողմից մի ընդհանուր կարգադրութիւն պէտք է լինի, որ եկեղեցու երեսփոխը կամ աւագ քահանան ննջեցեալի վրայից բերւած յիշած զառերը և կտորները անպատճառ ախտահաննել տան և մի առանձին տեղ դընել տան, և ոչ թէ խորանում պահեն, միւս եկեղեցական իրեղէնների հետ միասին*):

Այս իրողութիւնների շարքում պէտք է յի-

*) Այդպիսի իրերի ախտահանումի կամ հականնեխումի լաւագոյն միջոց է շոգու ջեռոցը (գոլորշու հնոց), որ գտնւում է հիւանդանոցներում և քաղաքային վարչութեանց հիմնարկութիւնների շարքում հասարակաց համար: Ձրի շոգին $100^{\circ} - 110^{\circ}$ ջերմութիւնով համարեա բոլոր մանրէները սպանում է առանց վնասելու սպիտակեղէնին, կերպասին կամ հագուստին:

Ուր որ այդ տեսակ հասարակաց ջեռոցներ չըկան, իւրաքանչիւր եկեղեցի կարող է ունենալ իր մեծ կաթսան ջրով լիքը, որի փականը պիտի լինի ծակոտիններով: Դրա վրայ յիշած շորեղէնները դարսելուց յետոյ, կարելի է շողիացնել պղնձի ջուրը այնքան, որ շոգին թափանցէ բոլոր իրեղէնները: Այդ էլ չըկանի, կարելի է շատ իրեղէններ հականնեխել տաք ջրում խաշելով և ապա արկի տակ չորացնելով: Փոքր առարկանները, որպէս և մարգուս ձեռները, ախտահանում են համաձայն վերևում մեր ասածի, սուլէմի ջրով (1 առ 1000) կամ բօրային թթուի (acidum boricum) $\frac{v}{v} 4$ լուծածլրով (4 մաս դեղ և 100 մաս ջուր): Ծան. հեղ.

շատակել և մի հակառողջական նոր սովորութիւն, որ քաղաքներում մուտք է գործել օտարներից. այն է թէ՝ ննջեցեալին տնից և յետոյ եկեղեցուց դուրս բերելիս՝ մերձաւորները սկըսում են հրաժեշտի համբոյըներ տալ դիակի շրթունքներին, երեսին։ Շատերը ազգական-բարեկամներից գուցէ և զգում են այդ սովորութիւնից, բայց որ միանգամ «աղաթ» է դառնում, ամօթից կատարում են նոյն անիմաստ համբոյըր։ Վերևում (գլուխ. III) ես բաւական բացատրեցի շրթունք համբուրելու վտանգները. դրանք անշուշտ կրկնապատկում են մեռելի շրթունք համբուրելիս։ Հայերս այդ սովորութիւնը երբէք չենք ունեցել, որովհետև առաջւայ ժամանակ մեզանում սովորութիւն էր, ինչպէս այժմ էլ մեր գիւղերում; ննջեցեալին լւալուց յետոյ պատանքել սպիտակ կտաւի մէջ և այդ կերպ դնել դագաղ։ Այժմ որ պատանքելը քաղաքներում վերանում է, հարկ չըկալ ամսնեին մեռելին համբուրելու վտանգաւոր նոր սովորութիւնն ընդունելու։

Այստեղ ի դէպ պէտք է խօսւի և մի ուրիշ նորամուտ սովորութեան մասին, որ Եւրոպայից է եկել մեզ հասել, այն է՝ ննջեցեալի դագաղի վրայ պսակներ դնելը։

Թարմ՝ պսակներ դիակի վրայ դնելը թէն հեթանոսական ժամանակից մնացած սովորութիւն է; բայց ունի, գոնէ, առողջապահական հիմք, այսինքն՝ թարմ ժաղկանց բուրմունքով

ծածկել դիակի նեխումից առաջացած գարշահոտութիւնը։ Սակայն ի՞նչ միտք ունին մետաղեայ պսակները, եթէ ոչ՝ մի երկու պսակավաճառ խանութներին օգուտ տալը և ժողովրդին աւերելը ամեն մի ննջեցեալի առիթով։ Ո՞րքան գերդաստաններ երբեմն իրանց անհրաժեշտ ծախսերը չըհոգացած՝ ստիպւած են եղել մետաղէ պսակի համար դրամ տալ, հարկան-ծանօթներից յետ չըմնալու համար... Այս քանդիչ սովորութեան դէմ Եւրոպացիք իրանք քիչ-քիչ սկսել են մաքառել, որպէս օրինակ Զւիցերիայի մի-երկուկանտօնում օրէնքով՝ արգելուում է ժողովրդին մեռելի վրայ պսակ դնելը։ Ննջեցեալի տէրերը կարող են, որքան կամենան, թարմ ծաղիկներ դնել դագաղի վրայ, այդ ծաղիկներից փունջեր, պսակներ դնել թէ մեռելի և թէ գերեզմանի վրայ, իսկ դրայց, բարեկամներից պսակներ ընդունելու սովորութիւնը ցանկալի է խիստ սահմանափակել։ Պիտի ասուի թէ դրանք հանգուցեալին յարգելու միջոցներ են. միթէ աւելի խելացի, աւելի օգտակար միջոցներ չըկան հանգուցեալի յիշատակը յարգելու, քան թէ մետաղեանպէտք կոյտեր նրա բնակարանում հաւաքել...»

Առհասարակ հեթանոսական ժամանակից մնացած սովորութիւններ, ինչպէս օրինակ՝ Թիֆլիսի նահանգում՝ սգազգեստներ (սկեր) մեռելատնից ազգական-բարեկամներին բաժանելը, քերինը, Հայաստանի մեռելահացը ցանկալի է որ լուսամիտ հոգևորականութեան յորդորներով։

ըրիստոնեայ ժողովրդի միջից փոքր առ փոքր վերանային, որովհետև տարափոխիկ հիւանդութեան և մահւան դէպրում՝ զրանք հիւանդութիւնը տարածելուն նպաստում են աւելի լայն խաւերում. ուստի զրանց համար ծրագրած ծախսերը պէտք է գործադրւին բարենպատակ և հասարակաօգուտ գործերի, օրինակ՝ իբրև նպաստ ծխական ընդհանուր գանձարանին, քահանաների ապահովական գանձարանին և այլն, որոնք աւելի յաւերժական յիշատակ կըլինին հանդուցեալի համար:

Այս գլուխը չեմ կարող վերջացնել առանց երկու խօսք ասելու ննջեցեալին եկեղեցուց գերեզմանատուն տանելու այժմեան կարգի մասին: Ընդունւած է, որ քահանաները շուրջառներով, դպիրները շապիկներով զգեստաւորւած, զլսարաց և հնտիոտն առաջնորդեն դագաղին, իսկ ժողովուրդը իր ուսերի վրայ տանի դագաղը: Ի նկատի առած այժմեան ժամանակի գերեզմանատների մեծ հեռաւորութիւնները, ի նկատի առած ցուրտ, անձրեային, ձիւնոտ, արեակէզ օրերը, առողջարանական տեսակէտով այս կարգն էլ բարեփոխութեան կարօտ է:

Անթիւ մրսողական հիւանդութիւններից և արևահար լինելու վտանգից թէ հոգեսոր դասը և թէ ժողովուրդը ազատ պահելու համար պէտք է՝

1) Հոգեսոր դասին իրաւունք տալ՝ ցրտից, անձրեից, ձիւնից պատսպարող հագուստով մասնակցել յուղարկաւորութեան, արևակէզ, անձրեա-

յին օրերում ամպհովանի կրել և այլն *), իսկ շուրջառը գործադրել, երբ կարգ կատարեն ճանապարհին կամ գերեզմանոցում:

2) Իւրաքանչիւր եկեղեցի ունենայ ծուխի բոլոր մեռեների համար գիակառք, որով ննջեցեալը տարւի գերեզմանատուն և ժողովուրդը ազատւի դագաղը իր ուսերի վրայ տանելու վրտանգներից:

3) Քահանաներին իրաւունք տրւի կառքով հետեւելու դագաղի գնացքին, ինչպէս ժողովը դականները այդ կարող են անել առանց բամբասւելու:

4) Զքաւոր մեռեների համար գիակառքի և քահանաների կառքերի ծախսը հոգացւի ընդհանուր ծխական գանձարանից, որ ամեն եկեղեցի ունենալու է ծխական հոգաբարձութեան հոգատարութիւնով, համեմատական տուրք սահմանելով իւրաքանչիւր ծխականից:

ԳԼՈՒԽ XCVI.

Ննջեցեալի թաղումն, լիսկիզմն եւ զմասումն:
Դերեզմանների վասնզները:

Հասանք վերջապէս մեռելը յաւիտենականութեան յանձնելու կարգերին: Սրա համար երկու

*) Ահա թէ ինչու, ի շարս այլ պատճառների, մեր քահանաները ամեն ներելի և աններելի միջոցներ գործեն դնում «կամիլաւկա» ձեռք բերելու. այդ կամիլաւկան ազատում է քահանաներին զլսարացութիւնից նոյն իսկ յուղարկաւորութեան ժամանակ և այլ այդպիսի դէպքերում:

Նղանակ կայ. մէկը՝ թաղումն է հողի տակ, միւսը՝ այրեցումը կամ դիակիզումը։ Այս երկու գործութիւնը թէկ արտաքինով շատ զանազան են երեսն, սակայն դրանց նպատակը և հետեւանքը կատարելապէս միևնունն են, այսինքն՝ մեռածի մարմինը վերլուծել իր բաղադրական մասերի—օդայինը տիեզերքի օգերին խառնւի, ջրայինը գոլորշանայ և հանքայինը երկրի հողին աւելանայ, հէնց Աստւածաշնչի խօսքերով էլ՝ հողից շինւածը «ի հող դարձի»։ Թաղման դէպքում այդ ամենը կատարւում է գետնի տակի և նոյն իսկ դիակում գտնւող մանրէների (միկրօբների) և այլ ստորագաս բոյսերի և որդունքների միջոցով, որոնք խմորում և նեխում կամ փառում առաջ բերելով՝ կամաց-կամաց վերլուծում են դիակը Յ-ից մինչև Յ տարւայ ընթացքում (նայած հողի յատկութիւններին) և ի վերջոյ դիակից մնում է մի քանի բուռ փոշի։ Իսկ դիակիզման դէպքում միևնունը կատարւում է Յ—Յ ժամանակամատ կրակի զօրութիւնով։ Ինչ որ օդերին խառնւելու է՝ գնում է ծուխի միջոցով և ի վերջոյ մնում է դարձեալ մի քանի բուռ աճիւն։

Եկեղեցական կարգերը սովորաբար կապւած են թաղման հետ, որ մարդկութեան խանձարուրից սկսած ամենաղիւրին միջոցն է համարւած դիակի դարշահոսութիւններից ազատւելու համար նրան պարտըկել գետնի խորքերում։

Քրիստոնէութեան առաջին դարերում ե-

կեղեցիների բակերում թաղւելը արքայութիւն երթալու միջոց էր համարւում։ Ուստի ամենքը աշխատում էին եկեղեցու քովը թաղւել։ Այսպէս ծնունդ առան հասարակային գերեզմանոցների եկեղեցիների շուրջը։ Սակայն ժամանակի ընթացքում տեսնւեցան գերեզմանոցների վրանգները և սկսեցին արգելել թաղումը եկեղեցիների մօտ։ Սա մնաց առանձնաշնորհութիւն բարձրաստիճան հոգեորականների համար, ապա և բարերարների համար և երբեմն էլ, ի զայրոյթ քրիստոնէական զգացմանց, այն մեղսալի հարուստների համար, որոնք կարծում են թէ դըրամի ուժով (կաշառքով) կարելի է և Աստրծուարքայութիւնը մտնել……

Գերեզմանատները եկեղեցիներից հեռացւելուց յետոյ էլ մնում են իբրև եկեղեցու սեփականութիւն հոգեորական վարչութեան տակ, ուստի հոգեորականութեան պարտքն է տեղեակ լինել գերեզմանոցների առողջաբանական հանգամանքներին։

Որո՞նք են գերեզմանոցների վտանգները։ Նախ՝ գերեզմաններից բարձրացող և օդի մէջ տարածւող գաղերը, որպէս ածխաթթուն, ածխային թթւուկը, ածխային ջրածինը, ծծըմքաջրածինը և նրա բարդութիւնը—անուշադրակը (ammonium), նոյնպէս և այն ժանտերը (miasmi) և հունտերը (spores), որոնց զոհ եղած են մեռները։ Այս և այս գերեզմանի վրայ երբեմն երևացող լոյսը, որին անգէտ ժողովուրդը գերբ-

նական նշանակութիւն է տալիս, այժմ պարզ-
ւած է թէ մի տեսակ վտեցուցիչ մանրէների
գունաւոր յատկութիւնն է, որ լուսածնութիւն
(phosphorescentia) է յառաջ բերում, ինչպէս և ծո-
վի ջրերի վրայ փոքրիկ լուսատու կենդանինե-
րի և յայտնի տեսակ սունկերի վրայ է նկատ-
ւում:

Գերեզմանոցի երկրորդ վտանգը նրա գետ-
նի տակի ջրերիցն է, որոնք իրանց մէջ առնե-
լով նեխում պատճառող բոլոր մանրէները, սոս-
րագաս բոյսերը և որթունքը՝ եթէ գան խառ-
նընին քաղաքի միջի ջրերին, անշուշտ մեծ վնաս-
ներ կարող են հասցնել հասարակաց առողջու-
թեանը:

Ահա այդ վտանգաւոր գաղերից և ջրերից
ժողովրդին ազատելու համար, մեռեների գե-
րեզմանները ոչ միայն եկեղեցու մօտ չըպիսի
լինին, այլ և պէտք է քաղաքներից և գիւղերից
հեռու տեղ գտնվին, եթէ կարելի է՝ բուրդների
ետեր: Եթէ բլուրներ չըլինին, ծառաստաններով
արհեստական թումբեր պիտի ստեղծվին բնակա-
տեղի և գերեզմանոցի միջև:

Գերեզմանատներում էլ ծառեր տնկելը և
ծաղկիներ հասցնելը պէտք է հոգևորականու-
թեան առանձին հոգսի առարկայ դառնայ: Ոմանք
ասում են, թէ այդ տեսակ բուսականութիւնը
գերեզմանոցը խոնաւացնելով՝ մեռեների վտու-
մը արագացնում է և ծառերը շատ տեղ են բըռ-
նում: Սակայն չըպէտք է մոռանալ թէ այդ ծա-

ռերը իրանց արմատներով ծծում են դիակնե-
րից արձակւած գաղերը, իրանց տերեններով հո-
գանի են կազմում և գաղերի սփռումը արգե-
լում, իրանց կանաչ տերեններով ներշնչում են օ-
գում տարածւող վնասակար գաղերը: Հետևաբար
գերեզմանոցները ծառաստան դարձնելը առող-
ջապահիկ է, յոյժ օգտակար է: Բայցի առողջա-
պահական նշանակութիւնը, որպիսի հոգեկան մը-
խիթարութիւն կըլինի մի ժողովրդի համար իր
սիրեցեալ ննջեցեալներին այցելել մի ծառա-
զարդ և ծաղկազարդ բուրաստանում, փոխանակ
մի վայրենի բաց «չօլում» պարել նրանց գերեզ-
մանները, որոնք գիշատիչ գաղամների այցելա-
տեղի են, ինչպէս դժբախտաբար մեր հայ շատ
քաղաքների և գիւղերի գերեզմանոցներն են...

Իւրաքանչիւր գերեզմանի փոսի խորութիւնը
ոլէտք է լինի առնւազն $2-2\frac{1}{2}$ մետր ($1-1\frac{1}{2}$
սաժէն), վասերն իրարուց գոնէ 4—5 մետր հե-
ռուարութիւն պիտի ունենան: Այս էլ պէտք է
ի նկատի առնել, որ մի գետին, որ երկար տա-
րիներ գերեզմանոցի է ծառայել, յագենում է,
այլ ևս մեռեների գիւղեները գժւարութեամբ է
վտեցնում. ուստի առողջաբանները յանձնաբա-
րում են յագեցած գերեզմանները 5—10 տարի
թողնելուց յետոյ՝ այգեստանի վերածել:

Գալով այրեցումին կամ դիակիզման (crematia),
ոչ մի եկեղեցի դրա գէմ արգելք չըպիտի դնէ,

քանի որ, ինչպէս վերը բացատրեցինք, պրանով միենոյն հետևանքն է ստացում, ինչ որ թաղումն է տալիս. միենոյն ժամանակ՝ ունի սրա վրայ մեծ առաւելութիւն, չըներկայացնելով այն վտանգները, որ թաղումից են առաջ գալիս. օդը ազատում է ապականութեան ու նեխման կենտրոնատեղից, տարափոխիկ հիւանդութիւնների հունտերն ի սպառ այրում են, բացի այն, որ այրեցումով գերեզմանոցներին յատկանալի մեծ տարածութիւններ մնում են անտառների կամ երկրագործութեան համար:

Դիակիպումը եթէ տոլագային մեր մէջ էլ սովորութիւն դառնայ, ինչպէս այդ քաղաքակերթ երկիրներում տարեցտարի աւելի գործադրելի է դառնում մշակութեան հողեր անտեսելու պահանջից, — բնական է թէ մեր եկեղեցական կարգը այդ հանդիսին մի քանի փոփոխութիւն կրէ. աղօթքների միջից պիտի հանւին թաղման վերաբերեալ բոլոր ակնարկները. սակայն «ի վերին Երուսաղէմը», որ հայ մարդու սրտին այնքան մօտ է, գուցէ այդ հանդիսին էլ ննչեցւի, ինչպէս թաղումի դէպըում:

Հոռվմայեցիների մէջ մեռեների դիակներն այրելը ընդհանրացած մի սովորութիւն էր: Եւ ամեն զերդաստան գեղեցիկ սափորների մէջ («ուռնա»-ներում) իր վախճանած անդամների աճիւնը տան մէջ պահում էր իրը մարմնաւոր յիշատակ հանդուցեալ սիրելուց:

Եգիպտացիները դիակների նեխումի անթիւ

մնամների առաջն առնելու համար՝ զմոսում էին ննջեցեալի մարմինը և ապա թաղում: Այդ է պատճառը, որ Եգիպտասի հողում մինչև օրս էլ հին ժամանակներից մնացած ամբողջ դիակներ են զտնում քարացած դրութեամբ. այդ դրութեամբ դիակներ երբեմն բացւում են և ուրիշ տեղերում, ուր պատահաբար հողը հականեխուկ տարրեր պարունակելով դիակը պահպանել է անապակ:

Այժմ էլ մեռելի դիակը զմոսում են ննջեցեալի թաղումը յետաձգելու համար կամ մարմինը օտար տեղից հայրենիք տեղափոխելու համար: Այս գէպքերում էլ աղագայում աւելի յարմար պիտի համարւի՝ դիակը այրեցման ենթարկել և աճիւնը մի փոքր սափորով ուղարկել, փոխանակ ամբողջ մարմինը ահազին դադապով:

Պ Լ Ո Ւ Խ ԽՎIII.

Ու իւ տագնացութիւնը:

Եկեղեցական առողջաբանութեան մէջ չի կարելի մոռացութեան տալ ուխտագնացութիւնը, որ բոլոր ժողովուրդների մէջ ընդունւած է և գործադրում է այս կամ այն ձևով, նայած զանազան համայնքի զարգացման աստիճանին: Ուխտագնացութիւնը ժողովրդական առողջապահութեան հետ մեծ կապեր ունի, չընայած որ նա հիմնած է կրօնական հաւատի վրայ:

Հնումը, հեթանոսութեան ժամանակ ժո-

ղովրդի մեծամասնութիւնը բժշկում էր չաստ-
ւածների տաճարներում քուրմերի միջոցով, որոնք
գիտէին հաւատի զօրութիւնից օգտւել՝ հրաշալի
բժշկութիւններ կատարելու բազմաթիւ ուխտա-
տեղիներում:

Այդ ուխտատեղիներում գործադրուղ բժշ-
կութեան եղանակներին կարելի է ծանօթանալ
ոչ միայն հելլէնական հին գրականութիւնից,
այլև այժմ գտնւած տապանագրերից: Օրինակ՝
1883—1885 թ. թ. պեղումները Պելոպօնէզում,
այժմեան Հիգուրիո կոչւած գիւղում բաց արին
Ասկղէպիոս չաստուծոյ տաճարի աւերակները.
այստեղ գտնւեցին տապանաքարեր, որոնց վրայ
գրւած է այս կամ այն հիւանդի պատմութիւնը,
ինչ ախտաերեսոյթներով նաև կաւ տաճարը, ինչ-
պէս բժշկուց և արակիսի շնորհակալութիւն արեց
տաճարին: Այս տապանագրերից երևում է, որ
քուրմերը, հիմնւելով ժողովրդի ջերմեռանդ հա-
ւատի վրայ, հիւանդին որոշեալ ուղղութեամբ
երազաւեսութեան ենթարկելով և հոգեկան ներ-
շնչումով էին բժշկում, միշտ հրաշագործ Ասկղէ-
պիոսի անունից: Երևում է նաև, որ քուրմերը
օգտակար առողջապահական միջոցներն էլ ձեռ-
քից չէին թողնում. նոր եկող հիւանդին նախ
գետում լողացնում էին և յետոյ մարմնամար-
զութեան ենթարկում, մի քանի օր՝ մինչև տա-
ճարում քնեցնելը՝ պաս էին պահել տալիս և այլն,
և այլն: Այս էլ պէտք է ասած, որ Ասկղէպիոսի
տաճարները կառուցւում էին միշտ առողջարար

լեռնային օդ ունեցող, անտառուտ տեղում, գե-
ղեցիկ գետակների և աղբերակների մօտ: Այս
բոլոր պարագաները միացած հաւատի ներշնչմա-
նը՝ անշուշտ բարերար ազգեցութիւն էին դոր-
ծում հիւանդի կազմւածքի վրայ:

Քրիստոնեայ ժողովուրդների ուխտագնա-
ցութիւնն էլ նոյն բժշկական և առողջապահա-
կան ներքին միտումն ունի, հիմնւած սակայն
ժողովրդական հաւատի վրայ այս կամ այն սուր-
բին, այս կամ այն վանքին: Այսպէս առաջ եկած
են մեզանում, ինչպէս և ուրիշ քրիստոնեայ հա-
մայնքներում, դարաւոր հոչակ վայելող ուխտա-
տեղիներ, որոնց դիմում է ժողովուրդը ջերմ
հաւատով:

Մեր նիւթից դուրս է քննել դաւանաբանա-
կան տեսակէտով սուրբերի դերը, սրանց պատ-
կերների կամ գերեզմանների պաշտումի հիմքը:
Մեզ զբաղեցնողն է հաւատի ազգեցութիւնը մար-
դուս առողջութեան վրայ:

Ում յայտնի չէ հաւատի դերը բժշկութեան
մէջ.—հաւատը և դրա վրայ հիմնւած առողջա-
նալու յոյսը աւելի մեծ կազդուրիչ զօրութիւն
ունին մարդուս ջղային և երակային սիստեմների
վրայ, քան թէ մեր միւս նիւթական կազդուրիչ
գեղերը, ուստի հիւանդութեան դէպքերում էլ
աւելի փրկարար կարող են լինել, քան թէ այդ
գեղերը:

Համբաւաւոր բժիշկների մեծ յաջողութիւնը
հիւանդաբուժութեան մէջ շատ դէպքերում կա-

խումն ունի այն հաւատից, որով հիւանդները զիմում են այդ տեսակ բժիշկներին, քանի որ նրանց պատիրած զեղերը սովորաբար միմնոյնն են լինում, ինչոր հասարակ բժշկինը:

Հաւատի ազդեցութիւնը և նշանակութիւնը այժմեան գիտութեան մէջ ընդունւած ձանաշելով, բայ իս, պէտք է ուրեմն զգուշանանք ուխտագնացութեան դէմ միակողմանի յարձակումներ անելու *):

Հասկացնել ժողովրդին անտեղի ուխտագնացութեան վասակար հետեանքը—պարտք է. երբ օրինակ՝ ջերմութեան հետ այս կամ այն գործարանի բորբոքում ունեցող հիւանդը, որի գլուխոր դեղն է հանգիստ պառկելը, մեր վատ ձանապարհներով քանի-քանի վերստ հեռաւորութիւնով քարշ է գալիս ուխտագնացութեան, անշուշտ վաստում է չարաչար. Սակայն անուրանի է և այն, որ յարատե սրտամաշ ազդեցութիւնների տակ առաջ եկած հիւանդութիւնները, ինչպէս օրինակ՝ հիստերիայի (Hysteriasis) կծկումները (contractura) և զանազան երկարատե անդամալուծութիւնները (Paralysis), նաև ջղաճգութիւնները (convulsiones), որ ոչ մի տնական դեղի չէին զիջում, շատ անգամ յանկարծ բժշկել են մի

*) Կարդա այս մասին հոչակաւոր պրօֆեսոր Շառկոյի (I. M. Charcot) գրքոյկը «La folie ևուսերէն թարգմ. «Առվելյանացած վերա», ուժ. «Կույշնացած» 1899 թ.

ջերմեռանդ ուխտի ժամանակ: Ուխտառեղիներում գէթ մի քանի օր հանգստանալով իր տնական չալքաշ աշխատանքից և փոխերով սովորական ապրուստի եղանակը, խեղճ ժողովուրդը որքան ուրիշ տկարութիւններից առողջանում է: Ով եղել է հասարակ ժողովրդի մէջ ուխտագնացութիւնների ժամանակ, նա կարող է հաստատել այս տեսակ բազմաթիւ վաստեր:

Քանի որ մենք չունինք, և դեռ երկար ժամանակ չենք ունենալու, մեր խղճալի գաւառներում բոլոր գիւղերի համար սրանց լիակատար վստահութիւնը և հաւատը վայելող գիտնական բժիշկներ, քանի որ չունինք մեր գիւղացուն մատչելի կիմա-և-ջրաբուժարաններ (կուրօրաններ), անշուշտ անխճութիւն կըլինի ժողովրդին զրկել դարերով սրբագործւած առողջապահութեան այդ տեսակ մի միջոցից՝ արգելելով ուխտ երթալը և հրատարակելով ուխտառեղինները իբր անիմաստ և հակաքրիստոնէական հաստատութիւններ:

Ցանկալի է ուրեմն, որ մեր հոչակաւոր ուխտառեղինները առողջապահական բոլոր պարագաներով սպայծառացւելին, և ոչ թէ մէկ կամ մի քանի աղահ, սնապաշտ և տգէտ վանականների կամքին թողնելի երեելի ուխտառեղինների բարեկարգութիւնը: Թող մեր լուսալիտ վանականներն էլ իբրև քրիստոնեայ այնքան շատ բարձրից չընայեն հեթանոս քուրմերի վրայ: Երանի թէ նրանք ունենային Առկղէպիտուի պաշտօնեաների հմտութիւնները և գիտենային նրանց պէս

ժողովրդի համար լիակատար բուժարաններ (կուրօրտ) դարձնել մեր ուստատեղիները...

Վերջապէս՝ թողնենք քուրմերին. թող հետևեն մեր լուսամիտները այն քրիստոնեայ սուրբ հայրերի օրինակին, որ մի ժամանակ երևելի վանքերում հիմնում էին՝ զպրանոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ, ծերունիների ապաստանարաններ։ Մի քանի վանքերում խնամք էին ստանում և հոգեոր կրթութիւն խղճալի կոյրերը, որոնք սովորում էին հոգեոր երգեր և սաղմուներ երգել ուստաւորների առջև։ Հոգեկան հիւանդներն ևս ունէին վանքերում իրանց ապաստանարանները։ Նոյն իսկ ընկած կանանց համար հաստատութիւններ են եղած, ուր նրանք ապաշխարում էին և բարոյական կեանքի վերադառնում։ Այսպիսի ուստատեղիներ ղեկավարողները պիտի կարողանային յիրաւի բաց ճակատով ժողովրդին ասել՝ «և զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»։

Դարերով ժողովրդի հաւատը վայելող ուկասատեղիները, որ բոլոր ազգերի մէջ գոյութիւն ունին, մի փիլիսոփայական ակնարկով և գրչի շարժումով ոչնչացնելը անհնարին բան է, ուստի մնում է մի խելացի բան—նրանց գոյութիւնը օգտակար դարձնել ժողովրդին վերը բերածս պատմական իդէալների համաձայն։ Այս իդէալների իրագործումը ամենաին արգելք չի կարող լինել արմատախիլ անելու փոքր առ փոքր ժողովրդի միջից սնապաշտութեան և ֆէտիշիզմի (իրապաշտութեան) այն երևոյթները, որ մուտք

են գործած քրիստոնէական եկեղեցիներում։ Վեր առնենք օրինակ մեր Մաշտոցը։ Ամենախոհեմ և օգտակար կարգերի հետ միասին այստեղ կարելի է գտնել այնպիսի անհեթեթութիւններ, ինչպէս ապականւած կամ վարակւած ջրհորը որոշած աղօթքներով մաքրել և անվարակ դարձնել (!), եկեղեցու օծեալ առարկաներին, պատկերներին, խաչին, աւետարանին հրաշալի գօրութիւն յատկացնել՝ անձրև բերելու, կարկուտ կապելու, համաճարակ ժանտախտներ փարատելու և այլն։ Այս բանից էլ օգտուում են ագահ հոգեորականները իրանց անձնական օգտի համար շահագործելու տգէտ ժողովրդի սնապաշտութիւնը, հնարելով կարմիր կամ սպիտակ աւետարանի, ու կամ դեղին խաչքարի և այլ և այլ ֆէտիշներ իրեւ սրբատեղիք։ Դրանց դէմ մաքառելու համար, նախ եկեղեցական ժողովով Մաշտոցից անշուշտ պէտք է դուրս հանւեն մի քանի հին ժամանակի այդ տեսակ նախապաշարմանց մնացողուները։ Երկրորդ գործնական միջոցն է վերը բերածս իդէալներով բազմադարեան ուստատեղիքը զարգացնելով որոնցից միայն գրաւելով և որոնց միայն դիմելով ժողովուրդը կամաց-կամաց կըզրկէ իր հաւատարմութիւնից և որևէ արդիւնքից անձնական շահագործութեան սնապաշտատեղիքը։

ՎԵՐԱԲԵՐՄԱՆ

Գրքոյնիս ամբողջութիւնը աչքից անցնողը
պիտի գտնի մի քանի ընդհանուր սկզբունքներ
ցիր ու ցան զանազան գլուխներում։ Իբրև վեր-
ջաբան ամփոփենք բոլորը ի միասին

1) Ոչ մի հասարակային հաստատութիւն,
լինի նա աշխարհային թէ հոգեոր կամ կրօնական,
իրաւունք չունի իր հիմնած կամ հիմնելի կար-
գերով մի մազաշափ անգամ վնասելու հասարա-
կաց առողջութեանը։

2) Բարեփոխութիւնների չենթարկող, ան-
շարժ մնացող եկեղեցին դատապարտւած կը լինի
բարոյական խմորման և փառումի, ինչպէս ան-
շարժ կանգնած լիճը, որի մէջ բարձր կազմ ու-
նեցող կենդանիները չեն կարող ապրել, տեղի
տալով մակաբոյժներին և ստորադաս վնասաբեր
մանրէներին, որոնք և հոտեցնում են լիճը։


3) Մարդարէները, առաքեալները, եկեղեցու
նախկին սուրբ հայրերը եկեղեցական օրէնսդրու-
թեանց և կարգերի հիմքեր դնելիս՝ շատ անգամ
դեկավարւել են բացի բարոյականը՝ նաև իրանց
ժամանակի առողջապահական սկզբունքով, ստէպ
փոխելով հինը, որի վնասակարութիւնը ճանաչւել է։

4) Այժմեան մեր եկեղեցական վարիչները,
սուրբ հայրերի օրինակին հետևելով, պէտք է ե-
կեղեցական կարգերը յարմարեցնեն արդի ա-
ռողջաբանութեան հիմնական և անհերքելի պա-
հանջներին, որոնց դէմ չէ Քրիստոսի բուն վար-
դապետութիւնը։

5) Այն կարեւոր բարենորոգութիւնները, որոնք
չեն խախտում մեր եկեղեցու դաւանաբանական
սկզբունքը, ոչ թէ վնասելու են մեր ազգային
եկեղեցու ինքնուրոյնութեան, այլ ընդհակառա-
կը՝ պիտի աւելի մեծ փայլ տան այդ ինքնու-
րոյնութեանը, հաստատելով նոյն իսկ նրա գո-
յութեան իրաւունքը։

6) Այս ամենի հիման վրայ մեր ազգային
եկեղեցու կենսունակութեան թշնամին է՝ լիա-
կատար անշարժութիւն և անփոփոխ կարգեր քա-
րոզողը, և ոչ թէ բարեփոխութիւններ պահան-
ջողը։

7) Այդ բարենորոգութիւնները պէտք է լի-
նին հասարակութեան զարգացման աստիճանին
համեմատ, այսինքն հասունացած, և ոչ թէ ան-
հեռատես ոստումներով, ինչպէս էլին նախկին կա-
թողիկոսութեան վերջի տարիների միերկու կօն-
դակները, ինչպէս է քարոզելլ՝ թէ եկեղեցիների
զանգահարութիւնը հակաքրիստոնէական է, ամեն
սրբատեղի և ուխտագնացութիւն աւելորդ է...»



ՆԿԱՏՒՅԹ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եր. էջ	Տպւած է	Պէտք է կարդալ
	վերկից	
6—18	» տեղ տալը	տեղ տալը,
7—8	» Fluge	Flügge
	ներքեկից	
8—13	» Դրիգոր և	Դրիգոր, Մկրտ. և
9—6	» Արագոններ	Արագոններ
13—10	» Հողմաւարի	Հողմարարով
19—6	» Դիֆթերիտ սիֆի-	Դիֆթերիտ, սիֆիլախու-
	լիստը	լիստը
29—17	» Դրութիւնը	Դրութիւն
42—12	» ոչ միայն բարոյական տեսակէտով,	ոչ միայն բարոյական տե- սակէտով, այլ և առողջա- պահական հիմունքով,
60—1	» ազնւազն	ազնւազն
62—6	» նախապատրաստւած,	նախապատրաստւած.
64—1	» et mariage	et le mariage
	վերկից	
65—6	» ժողովի	Ժողովի խորհրդածութեան
65—10	» կողմից:	կողմից, բացի Ամերիկայի Վաշինգտօն նահանգը, ուր այս տարի միայն հրատա- րակւեց պարտագիր օրէնք ամուսնացողներից բժշկ. Վկայական պահանջելու, թէկ դրա հետեանքը դեռ յայտնի չէ:
67—5	» progressive	progressive
	ներքեկից	
95—4	» ammonicum	ammoniacum

Հեղինակի հայերէն միա աշխատովթիւնները

1. Ուսումնարանների առողջապահութեան հարցեր,
1881 թ. Թիֆլիզ, դիմել հեղինակին: (Փորձ ամսագրից
արտատպած):

2. Մանկապարտէզների կամ Ֆրեօրելեան ծաղկա-
նոցների առողջապահութիւնը, 1882 թ. Թիֆլիզ. (Արձա-
գանք շաբաթաթ, արտատպած), դիմել հեղինակին:

3. Արդի սւղութիւն առողջարանութեան և բժշ-
կականութեան մէջ. Թիֆլիզ, 1886 թ. դիմել հեղինակին:

4. Բարակացաւ թոքախտը և նրա տարածման
առաջն առնելու միջոցներ: Նոյնը սուսերէն և վրացե-
րէն 1899 թ., Թիֆլիզ, (Էրատարակութիւն Կովկաս.
Կայսերական Բժշկական ընկերութեան. դիմել սրա քար-
տուղարին):

5. Ինֆլուենցա կամ վարակացում, թոքախտ, և
այլ ժողովրդական թերթիկներ. (արտատպած «Աղբիւր-
Տարագից» և այլն, 1904 թ. Թիֆլիզ, դիմել քարտու-
ղարին Կովկաս. Կայս. բժշկ. ընկ.):

Գ Ե Ւ Ե Լ 50 40 Պ.

Պահանջ գոնուամ է Թիֆլիսում. «Գուստինըրերգ»
զրախոսնութում.

ՀՀ Ազգային գրադարան



NL0262970

1967